ԿԼԻՄԵՆՏ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ /1939-1945ԹԹ./

293106
947.925:940,53/.54

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ /1939-1945թթ./

ԵՐԵՎԱՆ 2001

ԴՏՀ 941 (479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Հ 422

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Աշխատությունը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Գ. ՍԱՀԱԿՅԱՆԸ և «Մարշալ Բաղրամյան» հիմնադրամի փոխնախագահ, պահեստի գնդապետ Լ. Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆԸ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Կ. Ա.
Հ 422 ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ /1939-1945թթ./ /պատ. խմբ՝ Հ. Ա. Ավետիսյան/ ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., Եր., «Հրազդան» հրատ., 2001 թ.,

*Աշխատության մեջ, Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի, համապատասխան գրականության ու մամուլի նյութերի հիման վրա, համառոտակի ու նորովի լուսաբանվել է Երկրորդ համաշխարհային պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցը, բերվել Խորհրդային Միության հայ և հայաստանցի այլազգի հերոսների, փառքի լրիվ ասպետների ու հայ մարշալների, գեներալների ու ծովակալների ճշգրտված ու լրացված ցուցակները:*

*Աշխատությունը նախատեսված է համապատասխան մասնագետների և ընթերցող լայն զանգվածների համար:*

Հ $\frac{0503020913}{0125(01)-2001}$ 2001 ԳՄԴ 941(479.25)

ISBN 99930-73-31-8

© «Հրազդան» հրատարակչություն, 2001

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ /1939-1945ԹԹ./

1939թ. սեպտեմբերի 1-ին ֆաշիստական Գերմանիայի զորքերի Լեհաստան ներխուժելով սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Օգտվելով արևմտյան տերությունների /Անգլիա. Ֆրանսիա, որոնք 1939թ. սեպտեմբերի 3-ին պատերազմ էին հայտարարել Գերմանիային, սակայն գործնականում ոչինչ չէին ձեռնարկում Լեհաստանին օգնելու համար/ պասսիվ դիրքից՝ Հիտլերը շուտով իրեն ենթարկեց ոչ միայն Լեհաստանի մի զգալի մասը, այլև՝ Բելգիան, Հոլանդիան, Դանիան, Լյուքսեմբուրգը, Նորվեգիան, Ֆրանսիան, Հարավսլավիան և Հունաստանը: Մինչ այդ, Գերմանիան «խաղաղ» ճանապարհով իրեն էր բռնակցել Ավստրիան, զավթել Չեխիան ու Մորավիան, Սլովակիայում ստեղծել խամաճիկային պետություն: Եվրոպայում ֆաշիստական Գերմանիայի դաշնակիցներն էին Իտալիան, Իսպանիան, Հունգարիան, Բուլղարիան, Ռումինիան, Ֆինլանդիան, Սլովակիան, իսկ հեռավոր Արևելքում՝ Ճապոնիան: 1941թ. հունիսի 18-ին, Թուրքիայի և Գերմանիայի միջև կնքված բարեկամության և չհարձակման մասին պայմանագրով, Գերմանիան և Իտալիան իրավունք ստացան իրենց ռազմանավերն անարգել մտցնել Սև ծով: Այդ պայմանագրով Թուրքիան փաստացի դառնում էր ֆաշիստական զավթիչների ռազմավարական դաշնակիցը: Ուստի պատահական չէր, որ այդ պայմանագրի կնքումից չորս օր անց՝ հունիսի 22-ին, ֆաշիստական Գերմանիան, խախտելով 1939թ. օգոստոսի 23-ին ԽՍՀՄ-ի հետ 10 տարի ժամկետով կնքված չհարձակման պայմանագիրը, վաղ առավոտյան, հանկարծակի հարձակվեց Խորհրդային Միության վրա՝ նպատակ ունենալով կայծակնային պատերազմի միջոցով, մի քանի շաբաթվա ընթացքում, ոչնչացնել երկրագնդի 1/6 մասը կազմող հսկա տերությունը, ստրկացնել նրա ժողովուրդներին և ստեղծել գերմանական մեծ կայսրություն: Խորհրդային Միության վրա հարձակումով Երկրորդ համաշխարհային պատերազմը մտավ նոր փուլ[1]:

Դեռևս Երկրորդ համաշխարհային պատերազմն սկսվելուց մի քանի օր առաջ, 1939թ. օգոստոսի 22-ին, Օբերզալցբուրգում Երրորդ Ռայխի

բարձրագույն հրամանատարության հետ հանդիպման ժամանակ, Հիտլերը հատուկ ցուցում էր տվել իր զորավարներին, որ առաջիկա պատերազմում անխնա բնաջնջեն սլավոնական ժողովուրդներին՝ տղամարդկանց, կանանց, երեխաներին՝ ուշադրություն չդարձնելով հասարակական կարծիքին:

-Այժմ, մեր ժամանակներում, այլևս ո՞վ է հիշում 1915թ. Թուրքիայում հայերի բնաջնջման մասին,-[2] ցինիկաբար ասել էր ֆյուրերը իր գեներալներին ոգևորելու համար: Ուստի, պատահական չէր, որ պատերազմն սկսվելու առաջին իսկ օրվանից հայ ժողովուրդը մեկ մարդու պես ոտքի կանգնեց պաշտպանելու իր գոյությունը, որովհետև նա պարզ գիտակցում էր, թե ինչ վտանգ էսպռնում իրեն, եթե Գերմանիան հաղթի Խորհրդային Միությանը և ռազմական գործողությունների թատերաբեմը տեղափոխվի Անդրկովկաս: Չէ՞ որ հենց պատերազմի սկզբին Թուրքիան Խորհրդային Հայաստանի սահմանների մոտ կուտակել էր 26 սպառազեն դիվիզիա և սպասում էր հարմար պահի Հայաստան ներխուժելու համար[3]: Հայ ժողովրդի հիշողության մեջ դեռևս թարմ էին Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Գերմանիայի դաշնակից Թուրքիայի կողմից Արևմտյան Հայաստանում հայերի նկատմամբ կիրառված զանգվածային կոտորածները: Ցեղասպանության այդ բարբարոսական ակտի հետևանքով Արևմտյան Հայաստանում գազանաբար սպանվեցին ավելի քան 1,5 միլիոն հայեր, իսկ մոտ 800 հազարը բռնեցին գաղթի ճանապարհը՝ սփռվելով աշխարհով մեկ[4]: Ստալինգրադին ու Կովկասին ֆաշիստական զորքերի մոտենալուն պես Թուրքիայում գլուխ բարձրացրին պանթուրքիզմի գաղափարախոսները, որոնց հրապարակած աշխատություններում և քարտեզներում բացակայում էր Հայաստան անունն ընդհանրապես: «Մեծ Թուրքիայի սահմանները ձգվում էին մինչև Իթիլ /Վոլգա/-Ուրալ, Ղրիմ, Միջին Ասիա-Յակուտիա»-նշել է թուրքական «Բոզ կուրթ» /«Գորշ գայլ»/ ամսագիրը 1941թ. հուլիսի համարում՝ «Թուրքիզմը սպասում է» հոդվածում, դրան կցելով «Մեծ Թուրքիայի» քարտեզը՝ նշված սահմաններով[5]:

-Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության մեջ քանիցս ենթարկվել է օտար զավթիչների հարձակումներին,- 1941թ. օգոստոսի 25-ին նշել է «Правда»-ն՝ «Հայ ժողովուրդը Խորհրդային Միության ազատագրական պատերազմի մարտական մասնակից» առաջնորդող հոդվածում:- Նա գիտե, թե ինչ բան են կոտորածները, ջարդերը, սովը, բռնությունները: Հայ ժողովուրդը չի մոռացել հայերի ֆիզիկական ոչնչացումը, որը կազմակերպել էր արյունռուշտ Հիտլերի նախորդ Վիլհելմ կայսրն Առաջին իմպերիալիստական պատերազմի

տարիներին: Այդ պատճառով էլ, երբ արյունալի հրդեհի պես բռնկվեց պատերազմը, որն սկսեց մարդակեր Հիտլերը Խորհրդային Միության դեմ, հայ ժողովուրդը մեկ մարդու պես ոտքի կանգնեց պաշտպանելու սրբազան հայրենիքը»[6]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1941թ. հունիսի 22-ի՝ «Զինապարտների մոբիլիզացիայի մասին» հրամանագրի համաձայն, որով բանակ էին զորակոչվում 1905-1918թթ. ծնված զինապարտները[7] հունիսի 23-ից Խորհրդային Հայաստանում սկսվեցին մասսայական զորահավաքի աշխատանքները: Զորահավաքն ընթանում էր կազմակերպված ձևով, զորակոչիկների հայրենասիրական բարձր վերելքի պայմաններում: Մեծ թիվ էին կազմում նաև կամավոր ռազմաճակատ մեկնել ցանկացողները[8]: Այնուհետև, այլ հրամանագրերով, Կարմիր բանակզորակչվցին նաեւ 1890-1904, 1919-1925, նույնիսկ 1926 թվականներին ծնված զինապարտները, այսինքն՝ պատերազմի տարիներին բանակ զորակոչվեցին 1890-1926թթ.՝ 36 տարիքային հասակների 18-55 տարեկան զինապարտները[9]: Ըստ մեր հաշվումների, միայն Խորհրդային Հայաստանից պատերազմի տարիներին բանակ է զորակոչվել շուրջ 330 հազար մարդ, որից 300 հազարը հայեր: Այդ թվին ավելացնելով Հայաստանի սահմաններից դուրս ապրող հայերից բանակ զորակոչված շուրջ 300 հազար մարդու, ապա կարող ենք ասել, որ պատերազմին ընդհանուր առմամբ մասնակցել են շուրջ 600 հազար հայեր, որոնցից ավելի քան 200 հազարը զոհվել են մարտերում[10]:

Իր երեք հազարամյա պատմության ընթացքում հայ ժողովուրդը թերևս առաջին անգամ էր նման քանակությամբ մարդ զորակոչում բանակ: Սկզբնաղբյուրներից հայտնի է, որ հայկական ամենամեծ բանակը եղել է Տիգրան 2-րդ թագավորի օրոք /95-55մ.թ.ա./, որը կազմել է շուրջ 70-300 հազար մարդ[11]: Հայ Արշակունիների թագավորության ժամանակ /1-5-րդ դարեր/ հայոց զորքն, ըստ Զորանամակի /Հին Հայաստանի ռազմական ուժերի քանակի և դասակարգման մասին պետական փաստաթուղթ, հրովարտակ /կազմել է 124000 մարդ, որից 84000-ը՝ հեծելազորում /այրուձի/[12]: Բագրատունիների հայկական թագավորության ժամանակ /9-11դարեր/ հայոց զորքը բաղկացած էր 80000, իսկ Կիլիկիայի հայկական պետության 11-14-րդ դարեր/ բանակը՝ 60000 հոգուց[13]: Դրանից հետո հայ ժողովուրդը կորցեց իր պետականությունը: Հայաստանը բաժանվեց Բյուզանդիայի և Պարսկաստանի, ապա՝ Պարսկաստանի և Թուրքիայի միջև, որի հետևանքով հայերը զրկվեցին զենք կրելու իրավունքից: Սակայն, երբ 18-րդ դարի քսանական թվականներին Արցախում և Սյունիքում բորբոքվեց ազգային-ազատագրական պայքարի կրակը, 1722թ. աշնանը Գանձասարի եսայի կաթողի-

կոսն իր տրամադրության տակ հավաքեց 10000 հոգուց բաղկացած զորք. Սյունիքում Դավիթ-Բեկի զորքը 1722-1728թթ. հաշվվում էր 6000-7000 մարդ. իսկ 1783թ. Ղարաբաղի 5 մելիքները, հարկ եղած դեպքում. կարող էին զինել 5000 հոգու[14]:

Միայն 19-րդ դարի սկզբներին Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո, հայ ժողովրդի մի հատվածը ոչ միայն փրկվեց ֆիզիկական ոչնչացումից, այլև կրկին պաշտոնապես իրավունք ստացավ բանակ զորակոչվելու և զենք կրելու: Հայ ժողովրդի զավակներն իրենց սխրանքներով աչքի ընկան ռուս-թուրքական. ռուս-պարսկական, ռուս-ֆրանսիական, ռուս-ճապոնական պատերազմներում: Եթե 18-րդ դարի երկրորդ կեսում ռուսական բանակում հաշվվում էր 4 հայ գեներալ /Լազար Խրիստաֆորով, Իվան Կասպարով, Ռաֆայել Կուզանով և Ակիմ Խաստատով/, ապա 19-րդ դարում ռուսական բանակի հայ գեներալների թիվը /մեր.հաշվումներով/ անցնում էր 20-ից: Նրանց թվում էին Պավել Արապետովը, Դավիթ Դելյանովը, Դմիտրի Աշխարումովը, Ֆյոդոր Հախվերդովը, Պավել Մելիքովը, Վալերիան Մադաթովը, Իվան և Դավիթ Աբամելիք եղբայրները. Սեմյոն Դավթի Աբամելիք-Լազարյանցը, Մովսես Արղությանցը, Աղաթոն Ակիմովը. Վասիլի Բեբութովը, Իվան Լազարևը, Արշակ Տեր-Ղուկասովը, Միքայել Լոռիս -Մելիքովը, Հակոբ Ալխազովը, Գևորգ Ճախատունովը, Բեբութ Շելկովնիկովը, Հովհաննես Դավթյանը /Յան դե Վիտտե/, ծովակալ Լազար Սերեբրյակովը /Ղազարոս Արծաթագործյան/ և ուրիշներ: 20-րդ դարի սկզբներին ռուսական բանակում ծառայում էին նույնքան գեներալներ, նրանց թվում՝ Նիկոլայ Աղաթոնի Ակիմովը, Աղասի-բեկ Ավշարյանցը, Իվան Բաղրամովը, Թովմաս Նազարբեկովը, Մովսես Սիլիկովը, Ալեքսանդր Մելիք-Ալավերդովը, Իվան Հախվերդովը, Հակոբ Բագրատունին, Իվան Մարգարովը, Միքայել Հարությունովը. Գաբրիել Ղորղանյանը /Գավրիլ Կորգանով/, Պավել Մելիք-Շահնազարովը. Արտեմ Վարդանովը, Իշխան Թումանովը, Տիգրանովը, Արոևը, Սիմոնովը, Անդրանիկ Օզանյանը և շատ ուրիշներ: Նրանք բոլորն էլ իրենց արժանի ավանդը ներդրեցին ռուսական բանակի տարած հաղթանակներում, նպաստեցին ռուսական զենքի փառքի տարածմանը: 1914-1918թթ. Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ռուսական կայսրության մեջ բնակվող 2.054.000 հայերը ցարական բանակին տվեցին շուրջ 250000 զինվոր: Ֆրանսիայի, Անգլիայի և ԱՄՆ-ի բանակներ զորակոչված հայ մարտիկների թիվն անցնում էր 50000-ից[15]: Եթե դրան ավելացնենք նաև թուրքական բանակ զորակոչված ավելի քան 200000 հայերին, որոնց թուրքերը հավաքելով աշխատանքային գումարտակներում, 1915թ. առաջինների թվում սրախողխող արեցին, ապա դուրս է գալիս, որ Առաջին համաշխարհային

պատերազմին մասնակցել է շուրջ 500000 հայ:

1918թ. մայիսի 28-ին, երբ վերականգնվեց հայոց պետականու-թյունը, Հայաստանի Հանրապետությունն ստեղծեց իր բանակը, որը 1918, 1919 և 1920թթ. իր շարքերում ուներ համապատասխանաբար՝ 16000, 18000 և 40000 մարդ: Հայկական բանակում ծառայում էին շուրջ 2000 սպա և 20-ից ավելի գեներալ[16]:

Եթե Առաջին համաշխարհային պատերազմին հայերի մասնակ-ցության այդպիսի ակտիվությունը բացատրվում էր Արևմտահայաս-տանը թուրքական լծից ազատագրելու նպատակով, ապա երկրորդ համաշխարհային պատերազմին հայերի զանգվածաբար մասնակցելը, մեր կարծիքով, ոչ միայն նորաստեղծ հայրենիքի և արտասահմանյան երկրների /որտեղ նրանք ապաստան էին գտել թուրքական կոտորածներից փրկվելով/ օրինավոր քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների դրսևորում էր, այլև, հավանական է, որ դա 1915թ. Մեծ եղեռնը հովանավորած Գերմանիայից վրեժխնդիր լինելու ազգային բարձր ինքնագիտակցության պոռթկում էր:

Երկրորդ համաշխարհային պատերազմին հայ ժողովրդի մասնակցության բարձր ակտիվությունը դրսևորվեց ոչ միայն 600000 մարդ ռազմաճակատ ուղարկելով, այլև տարբեր զորատեսակների կազմում, բոլոր նշանավոր ճակատամարտերում, պաշտպանական և հարձակողական գործողությունների ժամանակ հայ ռազմիկների ցու-ցաբերած հերոսությամբ, կրտսեր, միջին, ավագ և բարձր հրամանա-տարական կազմում ունեցած հայերի բարձր տեսակարար կշռով:

Ըստ Ռուսաստանի Դաշնության Պաշտպանության նախարարու-թյան կադրերի գլխավոր վարչության տվյալների, որոնք պահպանվում են այդ նախարարության կենտրոնական արխիվում /Մոսկվայի մարզ, քաղաք Պոդոլսկ/, Երկրորդ համաշխարհային պատերազմի տարինե-րին հայերից մեկը՝ Իվան Քրիստափորի /Հովհաննես Խաչատուրի/ Բաղրամյանը եղել է ռազմաճակատի /1-ին Մերձբալթյան և 3-րդ Բելո-ռուսական, 1944-1945թթ./, երեքը՝ բանակի /Ի. Ք. Բաղրամյանը՝ 16-րդ համազորային, 11-րդ գվարդիական, Ս. Ա. Խուդյակով-Խանփերյանցը՝ 1-ին և 12-րդ օդային, Մ. Ա. Պարսեղովը՝ 40-րդ բանակների/, հինգը՝ կոր-պուսի /Ս. Ս. Մարտիրոսյանը՝ 50-րդ, ապա՝ 73-րդ, Հ. Հ. Մարտիրոսյանը՝ 90-րդ, Բ. Ի. Առուշանյանը՝ 14-րդ, ապա՝ 11-րդ գվարդիական հրաձգա-յին, Վ. Ս. Տամրուչին՝ 22-րդ մեքենայացված, Հ. Խ. Բաբաջանյանը՝ 11-րդ գվարդիական տանկային կորպուսների/, 22-ը՝ դիվիզիայի, 25-ը՝ բրիգադի, ավելի քան 100-ը՝ գնդերի հրամանատարներ, երեքը՝ ռազ-մաճակատի ռազմական խորհրդի անդամ /ծովակալ Ի. Ս. Իսակովը՝ Հյուսիս-Կովկասյան, ապա՝ Անդրկովկասյան, Ս. Ֆ. Գալաջևը՝

Արևմտյան, Դոնի, Ստալինգրադյան, Կենտրոնական, ապա՝ 1-ին Բելոռուսական. Ս. Գ. Կազբինցևը՝ 3-րդ Բելոռուսական ռազմաճակատների. վերջին երկուսը եղել են նաև այդ ռազմաճակատների քաղվարչության պետեր/, մեկը՝ ռազմաճակատի հրետանու հրամանատար /Մ. Ա. Պարսեղով՝ Հարավարևմտյան, ապա՝ 2-րդ Հեռավորարևելյան ռազմաճակատների/ և այլն[17]:

Պատերազմի տարիներին ԽՍՀՄ Ռազմածովային ուժերի նախարարի 1-ին տեղակալ և գլխավոր ծովային շտաբի պետն է եղել ծովակալ Ի. Ս. Իսակովը, իսկ հրետանու գեներալ-լեյտենանտ Ի. Դ. Վեքիլովը եղել է Հարավարևմտյան ուղղության զորքերի հրետանու հրամանատարի տեղակալ, Կարմիր բանակի հրետանու մարտական պատրաստության վարչության պետ: Բժշկական ծառայության գեներալ-գնդապետ Լ. Ա. Օրբելին պատերազմի տարիներին եղել է Լենինգրադի Ս. Մ. Կիրովի անվան Ռազմաբժշկական ակադեմիայի պետ, ԽՍՀՄ ԳԱ Ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն, ԽՍՀՄ ԳԱ փոխպրեզիդենտ: Նրա գործընկերը՝ բժշկական ծառայության գեներալ-լեյտենանտ Ա. Ի. Բուռնազյանը, պատերազմի տարիներին եղել է Հարավային, Հարավարևմտյան, Կալինինի, 1-ին Մերձբալթյան, ապա՝ 2-րդ Հեռավորաևելյան ռազմաճակատների սանիտարական վարչության պետ, ռազմաճակատների գլխավոր վիրաբույժներ են եղել բժշկական ծառայության գնդապետներ Ա. Ի. Հարությունովը /Հարավային, Հարավարևմտյան, Երրորդ Ուկրաինական/ և Ն. Ի. Կուկուջանովը /Ղրիմի, ապա՝ Անդրկովկասյան/:

1945թ. դեկտեմբերի 31-ի տվյալներով, Երկրորդ համաշխարհային պատերազմին մասնակցել է 62 հայ գեներալ, որոնցից մեկը՝ բանակի գեներալ /Ի. Ք. Բաղրամյան/, մեկը՝ ավիացիայի մարշալ /Ս. Ա. Խուդյակով-Խանփերյանց/, մեկը՝ Նավատորմի ծովակալ /Ի. Ս. Իսակով/: Այդ թիվը համեմատաբար ավելի մեծ կլիներ, եթե 1937թ. ստալինյան բռնաճնշումներին զոհ չգնային Կարմիր բանակի հայ զորապետներ, կոմկորներ Հայկ Բժշկյանցը /Գայը/, Գրիգոր Խախանյանը, Գասպար Ոսկանյանը, Անդրեյ Մելիք-Շահնազարովը, Սուրեն Շահումյանը, 1-ին կարգի բանակային կոմիսար Հայկ Հովսեփյանը, 2-րդ կարգի բանակային կոմիսար Օնիկ Սահակյանը, դիվիրամ /կոմդիվ/՝ Հակոբ Աթոյանը, դիվիզիայի կոմիսարներ Գևորգ Սաֆրազբեկյանը, Իվան Վարդանովը, Խորեն Աբրահամյանը, Հմայակ Տեր-Դավթյանը և ուրիշներ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի մասնակիցներից 79 հայորդու հետպատերազմյան տարիներին նույնպես շնորհվել է գեներալի և ծովակալի կոչում: Պատերազմի մասնակիցներից բանակի գեներալ Ի. Ք. Բաղրամյանին 1955թ. մարտի 11-ին շնորհվել է Խորհրդային Միության մարշալի կոչում: Նույն ամսին Խորհրդային

Միության նավատորմի ծովակալի կոչում է շնորհվել Ի. Ս. Իսակովին: 1975թ. զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի կոչում է շնորհվել Հ. Խ. Բաբաջանյանին, որին մինչ այդ՝ 1968 թվականին, շնորհվել էր զրահատանկային զորքերի մարշալի կոչում: 1980 թվականին ինժեներական զորքերի մարշալի կոչում է շնորհվել Սերգեյ Քրիստափորի Ագանովին, որի հայրն աստրախանցի հայ էր: Հիշեցնենք, որ ավելի վաղ՝ 1944 թվականին, ավիացիայի մարշալի կոչում էր շնորհվել Ս. Ա. Խուդյակով-Խանփերյանցին: Հետպատերազմյան տարիներին պատերազմի մասնակից հայ ծովայիններից 3-ին՝ Վալերիան Սուրաբեկովին, Իվան Գալուստովին և Աշոտ Սարկիսովին շնորհվել է փոխ-ծովակալի /վիցե-ադմիրալ/, իսկ 4-ին՝ Արտավազդ Սագոյանին, Միհրան Պետրոսյանին, Զարմայր Արվանովին և Վլադիմիր Փիրումովին՝ դեր-ծովակալ /կոնտր-ադմիրալի/ կոչում:

Ընդհանուր առմամբ, պատերազմի մասնակիցներից 8 հայորդու շնորհվել է գեներալ-գնդապետի, 28-ին՝ գեներալ-լեյտենանտի, 93-ին՝ գեներալ-մայորի կոչում: Հետաքրքիր է, որ դեռևս 1943թ. Կարմիր բանակի գլխավոր քաղաքական վարչության կողմից կազմված «ԽՍՀՄ ժողովուրդները Հայրենական մեծ պատերազմում» տեղեկատուում նշված է, որ գեներալների թվով ռուսներից հետո գալիս էին ուկրաինացիները, բելոռուսները, ապա՝ հայերը: Ավիացիոն զորքերի սպայական կազմի մեջ ռուսներից, ուկրաինացիներից և բելոռուսներից հետո տեղ էին զբաղեցնում հայերը՝ 1079 ավիացիոն հրամանատարներ, թաթարները՝ 1041, վրացիները՝ 800, չուվաշները՝ 400 և այլն:

Կարմիր բանակի հրետանու բարձր և ավագ հրամանատարների մեջ բացարձակ թվերով, ըստ կարգի, ռուսներից հետո տեղ էին գրավում ուկրաինացիները, բելոռուսները, հայերը, թաթարները, վրացիները, մորդվաները, մոլդովանները, ղազախները, բաշկիրները և այլն: Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան ավարտած սաների մեջ, որոնք ներկայացնում էին 42 ազգեր, ըստ թվի առջևում էին ռուսները, ուկրաինացիները, բելոռուսները, հայերը, վրացիները և այլն[18]:

Ավելի ամբողջական և արժեքավոր փաստեր է պարունակում Ռուսաստանի Դաշնության Պաշտպանության նախարարության կադրերի գլխավոր վարչության պարգևատրման բաժնի 1947թ. նոյեմբերի 1-ի տեղեկատուն՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին շքանշաններով ու մարտական մեդալներով /խոսքը՝ «Արիության համար» և «Մարտական ծառայությունների համար մդալներ մասին է/ պարգևատրվածների մասին. հայեր՝ 66802 մարդ, վրացիներ 49106, ադրբեջանցիներ՝ 36180 և այլն[19]:

Խորհրդային Միության հերոսների թվով ևս հայերը գրավում են

առաջնակարգ տեղ: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին կատարած սխրանքների համար Խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհվել 105 հայի, իսկ ընդհանրապես՝ 108 հայի և Հայաստանում ծնված կամ ապրած 11 այլազգիների: Հայերից 4-ին հերոսի կոչում է շնորհվել 1939-1940թթ. Խորհրդա-ֆիննական պատերազմում աչքի ընկնելու համար: Երկրորդ համաշխարհային պատերազմում առաջին հայ հերոսը տանկիստ, շարքային Կարապետ Սիմոնյանն էր /հերոսի կոչում շնորհելու հրամանագիրը՝ 15.01.1940թ./ իսկ Հայրենական մեծ պատերազմում առաջին հայ հերոսը՝ կործանիչ օդաչու Լազար Չափչախովը /21.07.1942թ./: Խորհրդային Միության մարշալ Ի. Ք. Բաղրամյանին /29.07.1944թ., 01.12.1977թ./ և գրոհային օդաչու, գվարդիայի փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանին /23.10.1942թ., 06.03.1945թ./ այդ բարձր կոչումները շնորհվել է կրկնակի, վրացիներն ու ադրբեջանցիները կրկնակի հերոս չեն ունեցել[20]: Պատերազմի տարիներին վրացիներից հերոսի կոչման են արժանացել 89, ադրբեջանցիներից՝ 43 մարդ, ընդ որում, ադրբեջանցի համարվող հերոսների մի զգալի մասը քրդեր են, եզդիներ, թալիշներ, թաթեր, լեռնային հրեաներ և այլն:

Պատերազմի տարիներին կատարած սխրանքների համար 27 հայ ռազմիկներ, պարգևատրվելով Փառքի 3-րդ, 2-րդ և 1-ին աստիճանի շքանշաններով, դարձել են զինվորական այդ պատվավոր շքանշանի լրիվ ասպետ: Հարկ ենք համարում նշել, որ երբ 1943թ. նոյեմբերի 8-ին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով, հիմնադրվեց Փառքի շքանշանը, Կարմիր բանակում Փառքի շքանշանի 3-րդ աստիճանի շքանշանով առաջինը պարգևատրվեց սերժանտ ժորա /Գևորգ/ Ավանեսի Իսրայելյանը /17 նոյեմբերի 1943թ./[21]:

Հայրենիքին մատուցած բացառիկ ծառայությունների համար պատերազմի տարիներին Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման են արժանացել 10 հայորդիներ: Հետագայում, պատերազմի մասնակից երեք հայ ականավոր գիտնականների՝ ՄիԳ կործանիչ ինքնաթիռների գլխավոր կոնստրուկտոր, ինժեներատեխնիկական զորքերի գեներալ-գնդապետ Արտեմ Միկոյանին, հրթիռամիջուկային վահանակի ստեղծման գլխավոր կոնստրուկտոր, տեխնիկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Սամվել Քոչարյանցին և Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանին այդ բարձր կոչումը շնորհվել է կրկնակի: 1994թ. հոկտեմբերի 11-ին Վ. Հ. Համբարձումյանին շնորհվել է նաև «Հայաստանի ազգային հերոս»-ի կոչում[22]: Նրա առաջարկած ինվարիանտության սկզբունքը, որի հիման վրա մշակվել է պղտոր

միջավայրում լույսի ցրման տեսությունը, օգտագործվել է պատերազմի տարիներին՝ ռազմական նպատակներով:

Հայ ժողովրդի ավելի քան 60000 զավակներ պատերազմին մասնակցել են հայկական ազգային դիվիզիաների շարքերում: Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան, որը կազմավորվել էր Հայաստանում 1920-1922 թվականներին՝ Հայաստանի Հանրապետության բանակի, ապա Հայկական կարմիր բանակի վերակառուցման հետևանքով, 1938թ. վերակազմավորվել էր ոչ ազգային միավորման, 1941թ. հունիսի 2-ից ինչ հուլիս 22-ը, համալրվելով Հայկական ԽՍՀ մարդկային ու նյութական միջոցներով, կրկին ձեռք բերեց իր ազգային տեսքը: Դիվիզիայի 16 հազարանոց անձնակազմից շուրջ 14 հազարը կազմում էին հայերը[23]: Դիվիզիան 1941թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին մասնակցեց խորհրդային զորքերի իրանական գործողությանը, ապա՝ Ուկրաինայի տարածքում պաշտպանական ծանր մարտերին: Հետագայում նա հատկապես աչքի ընկավ Ստալինգրադյան ճակատամարտում /17 հուլիսի 1942թ. -2 փետրվարի 1943 թ./ և վերակազմավորվեց 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի, պարգևատրվեց Լենինի շքանշանով: Այնուհետև, գվարդիականները ակտիվորեն մասնակցեցին Կուրսկի ճակատամարտին /5 հուլիսի- 23 օգոստոսի 1943թ./, Բելոռուսիայի ազատագրմանը /1944թ. հուլիս/՝ արժանանալով Վիտեբսկյան պատվավոր անվանը, ինչպես նաև Մերձբալթիկան գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրմանը /1944-1945թթ./[24]:

Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիան, որը կազմավորվել էր Կերչի թերակղզում, 1942թ. փետրվարի վերջերին, մարտի սկզբներին, Ղրիմի ռազմաճակատի 51-րդ բանակի կազմում մասնակցեց Կերչի ծանր մարտերին, որոնց ընթացքում հերոսաբար զոհվեց դիվիզիայի սիրված հրամանատար, գնդապետ Սիմեոն Գևորգի Զաքիյանը: Նա հետմահու պարգևատրվեց Լենինի շքանշանով, իսկ աճյունը տեղափոխվեց Երևան և ապրիլի 5-ին թաղվեց մայրաքաղաքի Ս. Մ. Կիրովի անվան մանկական զբոսայգում[25]: Այնտեղ կանգնեցվեց նաև հերոս հրամանատարի հուշարձանը: 1942թ. ապրիլի 19-ի տվյալներով, Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիայի անձնակազմը բաղկացած էր 9133 մարդուց, որից հայեր՝ 5744, ռուսներ՝ 1162, մնացածը՝ այլազգիներ[26]: 1942թ. մարտի 13-ից հայերեն լեզվով լույս է տեսնում «Հայկական սնայպեր» թերթը: 1942թ. մայիսի 7-20ը դիվիզիան գնդապետ /հետագայում գեներալ-մայոր/ Հմայակ Բաբայանի հրամանատարությամբ, Կերչի թերակղզու Արմա-էլի շրջանում դաժան մարտեր էր մղում հակառակորդի թվով մի քանի անգամ գերազանցող ուժերի դեմ ու ծանր կորուստների գնով փակում թշնամու առաջխաղացումը դեպի Թաման: Երբ գեր-

մանացիները մայիսի 15-ին գրավեցին Կերչ քաղաքը և դրությունը դարձավ անհուսալի. 51-րդ բանակի զորքերը թողեցին թերակղզին և տեղափոխվեցին Թաման: Թամանյան թերակղզի փոխադրված զորքերի մեջ էր նաև Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիան, որը, չնայած հսկայական կորուստներին, պահպանել էր մարտական դրոշները: Սակայն, 1942թ. հունիսի 14-ին դիվիզիան, ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի հրամանով, կազմացրվեց[27]:

Հայկական 408-րդ հրաձգային դիվիզիան, որը կազմավորվել էր Վաղարշապատում /այժմ՝ էջմիածին/, ապա՝ Երևանում 1941թ. օգոստոս -1942թ. մարտ ամիսներին և հայերեն լեզվով հրատարակում էր «Հանուն հայրենիքի» թերթը, Անդրկովկասյան ռազմաճակատի 47-րդ, ապա 18-րդ բանակների կազմում՝ Նովոռոսիյսկ-Տուապսե շրջանում, մեծ զոհերի գնով, փակեց գերմանաֆաշիստական զորքերի ճանապարհը դեպի Անդրկովկաս: Մարտերի մեջ մտնելուց առաջ, 1942թ. սեպտեմբերի 25-ի դրությամբ, դիվիզիայի անձնակազմը բաղկացած էր 11463 մարդուց, որից հայեր՝ 11125 /այսինքն՝ հայերը կազմում էին դիվիզիայի անձնակազմի 97 տոկոսը/, ռուսներ՝ 210, ուկրաինացիներ՝ 67 և այլն[28]: 1942թ. հոկտեմբերի վերջերին նոյեմբերի սկզբներին դիվիզիան առաջավոր գծից փոխադրվեց 18-րդ բանակի ռեզերվ՝ Տուապսե քաղաք, հանգստի ու համալրման համար: Չնայած վերոհիշյալ մարտերում դիվիզիան անձնազոհության գնով կատարել էր մարտական առաջադրանքը, պահպանել մարտական դրոշները, այնուամենայնիվ այն 1942թ. նոյեմբերի 22-ին կազմացրվեց: Նրա բազայի վրա, մի քանի օր անց, կազմավորվեց 7-րդ առանձին հրաձգային բրիգադը, որը 1943թ. ապրիլի վերջերին վերակազմավորվեց 23-րդ հրաձգային դիվիզիայի[29]:

Մոզդոկի մոտից՝ Կուբանի, Ուկրաինայի, Մոլդովայի տարածքներով դեպի Ռումինիա, Հունգարիա, Ավստրիա և Չեխոսլովակիա ձգվեց Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիայի մարտական ուղին: Դիվիզիային շնորհվեց Կիրովոգրադյան, ապա՝ Բրատիսլավյան պատվավոր անուն, նա պարգևատրվեց նաև Բոգդան Խմելնիցկու 2-րդ աստիճանի շքանշանով: Դիվիզիան կազմավորվել էր Ստեփանավանում՝ 1941թ. օգոստոս -1942թ. փետրվար ամիսներին: 1942թ. փետրվարի 23-ից հայերեն լեզվով հրատարակում էր «Մարտական դրոշ» թերթը: Ռազմաճակատ մեկնելու նախօրյակին՝ 1942թ. դեկտեմբերի 2-ին, դիվիզիան իր շարքերում ուներ 13837 զինվոր ու սպա, որից հայեր էին 13460-ը, այսինքն՝ հայերը կազմում էին անձնակազմի 97,3 տոկոսը[30]: Դիվիզիան կազմացրվել է 1945թ. հուլիսի 2-ին՝ Հունգարիայում[31]:

Կովկասյան նախալեռներից՝ Գրոզնու մատույցներից, Կուբանի, Թամանի, Կերչի, Ղրիմի վրայով դեպի Լեհաստան և Գերմանիա ձգվեց Հայ-

կական 89-րդ հրաձգային դիվիզիայի մարտական ուղին, որն ավարտվեց Բեռլինի գրավմամբ և էլբայի ափ դուրս գալով: Դիվիզիային շնորհվեց Թամանյան պատվավոր անուն, նա պարգևատրվեց Կարմիր աստղի, Կարմիր դրոշի և Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշաններով: Նրա 390-րդ և 400-րդ հրաձգային գնդերին շնորհվեց Սևաստոպոլյան պատվավոր անուն: Դիվիզիայի անձնակազմից 9 հոգի արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման, իսկ 8-ը դարձան Փառքի շքանշանի լրիվ ասպետ: Հերոսների թվում էին ավագ սերժանտներ Հունան Ավետիսյանը և Սուրեն Առաքելյանը, որոնք իրենց մարմնով փակեցին հակառակորդի դզոտի հրակնատը և կյանքի գնով նպաստեցին մարտական առաջադրանքի կատարմանը: 1943թ. փետրվարից դիվիզիայի հրամանատարը գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանն էր, որը փոխարինել էր նույն թվականի հունվարի 10-ին հերոսաբար զոհված գնդապետ Արտաշես Վասիլյանին: Դիվիզիան կազմավորվել էր Երևանում՝ 1941թ. նոյեմբեր 1942թ. հունվար ամիսներին: Սկսած 1942թ. հունվարի 12-ից հրատարակում էր «Կարմիր զինվոր» թերթը: Ռազմաճակատ մեկնելու նախօրյակին՝ 1942թ. օգոստոսի 8-ին, դիվիզիան իր շարքերում ուներ 11782 զինվոր ու սպա, որից հայեր էին 11674-ը, այսինքն՝ հայերը կազմում էին ողջ անձնակազմի 99,1 տոկոսը[32]: 1945թ. սեպտեմբերին դիվիզիան վերադարձավ Հայաստան և տեղաբաշխվեց Երևանում, Էջմիածնում և Քանաքեռում: Այն գոյություն ունեցավ մինչև 1956թ. ամառը և համարվում էր Անդրկովկասյան զինվորական օկրուգի առաջատար զորամիավորումներից մեկը[33]:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին կազմավորված հայկական ազգային զորամիավորումներից միայն մեկն էր, որ չմասնակցեց մարտական գործողություններին: Դա Հայկական 261-րդ հրաձգային դիվիզիան էր, որը կազմավորվել էր Երևանում՝ 1942թ. դեկտեմբերին: 1943թ. հունվարից դիվիզիայում սկսեց հայերեն լեզվով հրատարակվել «Մարտ հանուն հայրենիքի» թերթը: Այդ ժամանակ դիվիզիայի անձնակազմը բաղկացած էր 8981 մարդուց, որից հայեր էին՝ 6632-ը, այսինքն՝ հայերը կազմում էին անձնակազմի 73, 8 տոկոսը: Այս կազմը, աննշան փոփոխություններով, պահպանվեց մինչև պատերազմի վերջը: Այսպես օրինակ՝ 1945թ. մարտի 1-ի տվյալներով դիվիզիայում հաշվվում էր 9439 զինվոր ու սպա, որից հայեր՝ 7813 /82,88 տոկոս/[34]: Դիվիզիայի հիմնական խնդիրն էր՝ պաշտպանել Խորհրդային Հայաստանի՝ Թուրքիայի հետ ունեցած պետական սահմանը, ինչպես նաև ռազմաճակատի համար երթային գումարտակների պատրաստումն ու ուղարկումը: Մինչև իր կազմացրումը /1945թ. հունիս/ դիվիզիան պատվով կատարեց իր առջև դրված խնդիրը: Նրա շարքերում մարտական պատրաստու-

թյուն ստացած ավելի քան 10000 հայ զինվորներ մեկնեցին գործող բանակ և իրենց արժանի ավանդը ներդրեցին գերմանաֆաշիստական զավթիչների ջախջախման գործում[35]:

Բացի վերոհիշյալ ազգային զորամիավորումներից, Խորհրդային Հայաստանում կազմավորվեցին կամ վերահամալրվեցին 61-րդ, 136-րդ /15-րդ գվարդիական/, 138-րդ /70-րդ գվարդիական/, 151-րդ, 236-րդ, 320-րդ, 406-րդ հրաձգային դիվիզիաները և մի շարք բրիգադներ, որոնք թեկուզ պաշտոնապես չէին կոչվում ազգային, սակայն նրանց անձնակազմերի զգալի մասը ռազմաճակատ մեկնելուց առաջ կազմում էին հայերը: Այսպես օրինակ՝ Լենինականում /այժմ՝ Գյումրի/ համալրված 320-րդ հրաձգային դիվիզիայի անձնակազմը 1942թ. սեպտեմբերի 16-ի տվյալներով, բաղկացած էր 9124 մարդուց, որից հայեր էին 7978-ը /87,5 տոկոս/[36]: 61-րդ հրաձգային դիվիզիան, որը լրակազմվել էր Երևանում՝ 1941թ. դեկտեմբերին, 70 տոկոսով համալրված է հայ ռազմիկներով, որի համար հաճախ այս միավորումը համարվել է հայկական[37]: Հայկական բոլոր դիվիզիաներում և այն միավորումներում ու ռազմաճակատներում, որտեղ հայեր շատ կային, հայերեն լեզվով հրատարակվել են 16 ռազմաճակատային թերթեր:

Հայ ռազմիկները պատերազմի հենց առաջին իսկ օրվանից, ակտիվորեն մասնակցեցին մարտական գործողություններին՝ սկսած հեռավոր հյուսիսի Մուրմանսկի շրջանից մինչև Մերձբալթիկա, ԽՍՀՄ արևմտյան սահմաններով դեպի հարավ՝ մինչև Օդեսա-Ղրիմ: Հայ ռազմիկները մարտնչում էին բոլոր ռազմաճակատներում, բոլոր զորատեսակների կազմում:

Պատերազմի առաջին օրերին՝ 1941թ. հունիսի 22-ից մինչև հուլիսի 20-ը, իրենց անմահ փառքով պսակեցին Բրեստի ամրոցի կայազորի հերոս պաշտպանները: Բրեստի պաշտպանների մեծ մասը զոհվեց զենքը ձեռքին մինչև ատամները զինված հակառակորդի, թվով մի քանի անգամ գերակշռող ուժերի դեմ մղած անհավասար մարտերում, մինչև վերջ հավատարիմ մնալով զինվորական երդմանը, մի մասին հաջողվեց ճեղքել շրջապատման օղակը և միանալ դեպի արևելք նահանջող Կարմիր բանակի հիմնական ուժերին, իսկ մի մասն էլ վիրավոր կամ ուժասպառ վիճակում գերվեց թշնամու կողմից, սակայն հետագայում փախչելով գերությունից, համալրեցին պարտիզանական և դիմադրական շարժման շարքերը: Ամրոցի խիզախ պաշտպանների թվում կային ավելի քան 200 հայ ռազմիկներ, որոնց կեսից ավելին զորակոչվել էին Ղափանի /այժմ՝ Կապան/ շրջանից: Նրանց թվում էին՝ Թավադի Բաղդասարյանը, Ադրանիկ Մինասյանը, Հրաչիկ Բախշյանը, Վահան Գրիգորյանը, Լալազար Թադևոսյանը, Սոս Նուրիջանյանը, Սամվել Մաքևոսյանը և

շատ ուրիշներ, որոնցից 75-ը մինչև բանակ զորակոչվելն աշխատել էին որպես ուսուցիչներ:

1941թ. հունիսի 22-ից մինչև դեկտեմբերի 31-ը տեղի ունեցած ծանր մարտերում կատարած սխրանքների համար Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհվեց 4 հայորդու՝ օդաչուներ Լազար Չափչախովին և Նելսոն Ստեփանյանին, գումարտակի հրամանատար Խաչատուր Մելիքյանին և հրետանային մարտկոցի հրամանատար Սերգեյ Օգանովին: Հայրենական մեծ պատերազմում առաջին հայ հերոսը՝ Հյուսիսարևմտյան ռազմաճակատի 38-րդ առանձին ավիագնդի ավիաէսկադրիլիայի կոմիսար, ապա 416-րդ կործանիչ ավիագնդի հրամանատար Լազար Չափչախովն էր, որը Սերձբալթիկայում և Լենինգրադի մատույցներում կատարել էր 268 մարտական թռիչք, անձամբ ցած գցել հակառակորդի 8, իսկ խմբի կազմում՝ 19 ինքնաթիռ[38]: Մինչ այդ խիզախ օդաչուն 1941թ. նոյեմբերի 27-ին պարգևատրվել էր Լենինի շքանշանով[39]: Պատերազմի առաջին օրերին կատարած սխրանքների համար, Լենինի շքանշանի արժանացան նաև 12-րդ տանկային բրիգադի հետախուզական ջոկի հրամանատար, ավագ սերժանտ Արամայիս Քոսոյանը, 199-րդ հրաձգային դիվիզիայի 492-րդ հրաձգային գնդի գումարտակի հրամանատար, ավագ լեյտենանտ Սարգիս Ռաշոյանը, 12-րդ բանակի 11-րդ զրահագնացքի հրետանավոր Լևոն Գրիգորյանը, 132-րդ տանկային բրիգադի գնդացրային ջոկի հրամանատար, սերժանտ Խաչատուր Բեկնազարյանը, 136-րդ հրաձգային /15-րդ գվարդիական/ դիվիզիայի 291-րդ հրետանային գնդի կրակային դասակի հրամանատար, լեյտենանտ Բաբկեն Մանուկյանը և 30-րդ հրաձգային դիվիզիայի 59-րդ թեթև հրետանային գնդի 4-րդ ականանետային մարտկոցի հրամանատար, լեյտենանտ Քրիստափոր Իվանյանը /հետագայում գեներալ-լեյտենանտ/[40]: Պատերազմի առաջին օրը՝ 1941թ. հունիսի 22-ին, գերմանական «Յունկերս-88» ռմբակոծիչ ինքնաթիռ ցած գցեց 8-րդ տանկային դիվիզիայի զենիթային հրանոթի նշանառու, եֆրեյտոր Ավետիս Աղայանը, որի համար պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով[41]: Հունիսի 22-ին, թշնամու գերազանցող ուժերի հարձակումը հետ մղելիս, հերոսաբար զոհվեց 6-րդ հեծյալ դիվիզիայի 94-րդ հեծյալ գնդի հրամանատար, փոխգնդապետ Նիկոլայ Պետրոսյանը, որը մինչ այդ աչքի էր ընկել Հեռավոր Արևելքում՝ ճապոնական սամուրայների դեմ մղված մարտերում և պարգևատրվել Լենինի, Կարմիր աստղի շքանշաններով, «ԲԳԿԲ 20 տարին» մեդալով և Մոնղոլիայի ժողովրդական հանրապետության Կարմիր դրոշի շքանշանով[42]: 1941թ. հունիսի 24-ին իր այրվող ռմբակոծիչ ինքնաթիռը գիտակցաբար թշնամու տանկային շարասյան մեջ մխրճեց 31-րդ խոյընթաց ռմբակոծիչ, ավիագնդի ավիաէսկադրի-

լիայի հրամանատար, խորհրդաֆիննական պատերազմում Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրված, ավագ քաղղեկ Սարգիս Հայրապետովը: Կապիտան Նիկոլայ Գաստելլոն նման սխրանք կատարեց երկու օր անց՝ հունիսի 26-ին[43]: Հետագայում այդպիսի անձնազոհ հերոսական սխրանքներ կատարեցին օդաչուներ Պատրիկ Գազազյանը, Արտյուշա Օհանջանյանը, Աշոտ Անտոնյանը, Գրիգոր Սարկիսովը, Էդիկ Բունիաթյանը և լեգենդար Նելսոն Ստեփանյանը: Բալթիկ ծովի ֆիննական ծովածոցում անմահ սխրանք կատարեց Կարմրադրոշ Բալթիական ռազմածովային նավատորմի ականորս նավերի բրիգադի 3-րդ դիվիզիոնի զրահանավակների օղակի հրամանատար, լեյտենանտ Վահան Ակոպովը՝ իր կյանքի գնով անխուսափելի կործանումից փրկելով 14 ականորս նավեր: Խիզախ ծովայինը հետմահու պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով, իսկ նրա անունը ԽՍՀՄ պաշտպանության նախարարի հրամանով, առհավետ գրանցվեց զրահանավերի ստորաբաժանման անձնակազմի ցուցակում[44]: Պատերազմի տարիներին, հետմահու, այդպիսի բարձր պատվի արժանացան նաև Խորհրդային Միության հերոսներ Հունան Ավետիսյանը, Գարեգին Բալայանը, Հրանտ Օհանյանցը, Սերգեյ Օգանովը և Լենինի շքանշանակիր Մեսրոպ Ղազարովը[45]:

Հայրենական մեծ պատերազմում առաջին խոշոր ճակատամարտը, որտեղ գերմանաֆաշիստական անպարտելի համարվող բանակը կրեց ջախջախիչ պարտություն, դա Մոսկվայի ճակատամարտն էր, որը տեղի ունեցավ 1941թ. սեպտեմբերի 30-ից մինչև 1942թ. ապրիլի 24-ը: «Մոսկվայի մոտ տարած հաղթանակը Հայրենական մեծ պատերազմի առաջին տարվա ռազմաքաղաքական վճռական իրադարձությունն էր,- իր հուշերում նշել է այդ ճակատամարտի ակտիվ մասնակից Ի. Ք. Բաղրամյանը,- դժվար է գերագնահատել նրա հետևանքները պատերազմի հետագա ընթացքի վրա: Վերջնականապես տապալվեց կայծակնային պատերազմի հիտլերյան պլանը, պսակազերծ եղավ հիտլերյան բանակի անհաղթելիության մասին եղած կեղծ առասպելը: Աշխարհի ժողովուրդներն առաջին անգամ հավատացին ագրեսորին սանձելու հնարավորությանը»[46]:

Մոսկվայի ճակատամարտում տարած հաղթանակում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև հայ ժողովրդի զավակները: Գեներալ-մայոր Հովհաննես Բաղրամյանը հանդիսանում էր Հարավարևմտյան ռազմաճակատի աջթևյան միավորումներից ստեղծված օպերատիվ-շարժական զորախմբի շտաբի պետը: Այդ զորախումբը հատկապես աչքի ընկավ ճակատամարտի բաղկացուցիչ մասը հանդիսացող Ելեցյան հարձակողական գործողության ժամանակ /6-16 դեկտեմբերի 1941թ./, որը

նպաստեց Արևմտյան ռազմաճակատի զորքերին հաջողությամբ իրագործելու գլխավոր հարվածը: Գործողությունը հմտորեն մշակելու և իրագործելու համար 1941թ. դեկտեմբերի 27-ին Ի. Ք. Բաղրամյանին շնորհվեց գեներալ-լեյտենանտի կոչում[47]: Հարավարևմտյան ռազմաճակատի աջթևյան զորախմբի գործողությունների հաջողությունը մեծ չափով պայմանավորված էր նաև այդ ռազմաճակատի հրետանու պետ, Խորհրդային Միության հերոս, հրետանու գեներալ-լեյտենանտ Միքայել Պարսեղովի, նրա տեղակալ, գնդապետ Իվան Վեքիլովի, ռազմաճակատի քաղվարչության պետ, բրիգադային կոմիսար Սերգեյ Գալաջևի անձնուրաց աշխատանքով: Պատերազմի աստված հրետանին մեծ դեր խաղաց Մոսկվայի ճակատամարտի օրերին ֆաշիստական գեներալ Գուդերիանի տանկային զորամասերի առաջխաղացումը կանգնեցնելու և ջախջախելու գործում: Ուստի, պատահական չէր, որ ճակատամարտի օրերին՝ 1942թ. հունվարի 10-ին, հրետանու գեներալ-մայորի կոչում շնորհվեց Իվան Վեքիլովին: Հետագայում գեներալի կոչում շնորհվեց նաև Սերգեյ Գալաջևին: Ճակատամարտի մասնակիցներից նման կոչման արժանացան նաև Արևմտյան ռազմաճակատի 33-րդ բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետ, գնդապետ Ստեփան Կինոսյանը, 239-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գնդապետ Հայկ Մարտիրոսյանը, 340-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, փոխգնդապետ Սարգիս Մարտիրոսյանը: Վերջին երկուսը պատերազմի վերջին փուլում դարձել էին հրաձգային կորպուսի հրամանատարներ:

Մոսկվայի ճակատամարտի մասնակից հայ խիզախներից էին Արևմտյան ռազմաճակատի 1-ին գվարդիական մոտոհրաձգային դիվիզիայի 6-րդ մոտոհրաձգային գնդի հրամանատար, գվարդիայի փոխգընդապետ Ներսես Բալոյանը, որը պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով, ստացավ գնդապետի կոչում և առաջ քաշվեց 146-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի պաշտոնում, 43-րդ բանակի 5-րդ օդադեսանտային կորպուսի առաջին հրաձգային գնդի վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Գևորգ Պարսեղովը, որն Արևմտյան ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ /հետագայում Խորհրդային Միության մարշալ/ Գ. Կ. Ժուկովի 1942թ. փետրվարի 10-ի թիվ 0157 հրամանով պարգևատրվեց Լենինի շքանշանով[48], 479-րդ հրաձգային գնդի ջոկի հրամանատար, սերժանտ Պարգև Խաչատրյանը և 53-րդ հրաձգային դիվիզիայի 475-րդ հրաձգային գնդի հրամանատար, մայոր Համբարձում Մելիքյանը, որոնք պարգևատրվեցին Կարմիր դրոշի շքանշանով, 2-րդ գվարդիական հեծյալ դիվիզիայի 7-րդ գվարդիական գնդի զինբուժակ Գերասիմ Եփրեմյանը, որն արժանացավ Կարմիր աստղի շքանշանի Տուլայի մարզի Յասնայա Պոլյանայում գտնվող,

ռուս մեծ գրող Լև Տոլստոյի տուն-թանգարանի տարածքը գերմանաֆաշիստական զորքերից ազատագրելու մարտերին ակտիվ մասնակցման համար, 17-րդ տանկային գնդի տանկիստ Բաբկեն Յունանյանը, ավագ սերժանտ Հայկ Շահունցը և շատ ուրիշներ[49]:

Հայ ժողովրդի զավակներն ակտիվ մասնակցություն ունեցան նաև Ստալինգրադի, Կովկասի ճակատամարտերին, Կերչի և Ղրիմի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Լենինգրադի, Մերձբալթիկայի, Մոլդովայի և Անդրբևերի ազատագրմանը:

Ստալինգրադի ճակատամարտում /17 հուլիսի 1942թ. - 2 փետրվարի 1943թ./ ցուցաբերած քաջության համար Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացավ 17-րդ օդային բանակի 288-րդ կործանիչ ավիադիվիզիայի 366-րդ կործանիչ ավիագնդի ավիաէսկադրիլիայի հրամանատար, ավագ լեյտենանտ Սերգեյ Բուռնազյանը, որը Ստալինգրադի երկնակամարում կատարել էր 266 մարտական թռիչք, անձամբ ցած գցել 22 ինքնաթիռ և 2 ինքնաթիռ էլ ոչնչացրել խմբակային մարտում[50]: Ճակատամարտի առաջին օրերին իր սխրանքներով աչքի ընկավ 63-րդ բանակի 14-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 36-րդ գվարդիական հրաձգային գնդի հրամանատար, գվարդիայի մայոր Մաթևոս Մաղաքյանը և արժանացավ Լենինի շքանշանի[51]: Լենինի շքանշանի արժանացավ նաև 133-րդ տանկային բրիգադի կոմիսար Գրիգոր Կալուստովը, միայն Ստալինգրադի մատույցներում նրա բրիգադը խփեց հակառակորդի 218 տանկ[52]: Նման պարգևի (բայց հետմահու) արժանացավ 64-րդ բանակի 138-րդ հրաձգային դիվիզիայի 295-րդ հրետանային գնդի հրանոթի հրամանատար, սերժանտ Կոստյա Վարդևանյանը, որը դիպուկ կրակով Յագոդնի ագարակի մոտ 1942թ. օգոստոսի 28-ին տեղի ունեցած մարտում, խփեց գերմանական 6 տանկ: Ավաղ, այդ մարտը վերջինը եղավ խիզախ հայորդու համար նա զոհվեց մարտական պոստում՝ հերոսի մահով: Կոստյա Վարդևանյանը Թումանյանի շրջանի Աքորի գյուղից էր[53]:

Ստալինգրադյան ճակատամարտին ակտիվորեն մասնակցեցին և պատմական հաղթանակում իրենց արժանի ավանդը ներդրեցին Դոնի ռազմաճակատի քաղվարչության պետ, գեներալ-մայոր Սերգեյ Գալաջևը, հրետանու մարշալ Վորոնովի օպերատիվ խմբի անդամ, հրետանու գեներալ-մայոր Իվան Վեքիլովը, 5-րդ տանկային բանակի ռազմական խորհրդի անդամ, գեներալ-մայոր Հայկ Թումանյանը, 60-րդ մոտոհրաձգային բրիգադի հրամանատար, փոխգնդապետ Ասքանազ Կարապետյանը, 80-րդ գվարդիական դիվիզիայի շտաբի պետ, փոխգնդապետ Քրիստափոր Ջելաուխովը /վերջին երկուսին հետագայում շնորհվեց գեներալ-մայորի կոչում/, 61-րդ հեծյալ դիվիզիայի 213-րդ հեծյալ

գնդի հրամանատար, մայոր Արտեմ Յակոբյանը, 13-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 42-րդ գվարդիական հրաձգային գնդի գնդացրային վաշտի քաղգծով տեղակալ, գվարդիայի ավագ լեյտենանտ Վաչե Ավակիմովը. նույն ինքը՝ «Պավլովի տան» պաշտպանների հանրահայտ կոմիսարը. տանկիստներ Սարգիս Սաղաթելյանը և Գուրգեն Ավագյանը, օդաչուներ Ստեփան և Վլադիմիր Միկոյանները, սակրավոր Սուրեն Ավետիսյանը, ջոկի հրամանատար Սուրեն Միրզոյանը, հրետանավոր Սամվել Յարությունյանը, հակահետախույզ Աշոտ Բարսեղյանը, հեծելազորային Գեղամ Մուղնեցյանը և շատ ուրիշներ: Նրանց մի զգալի մասը մարտնչել էր Յայաստանում կազմավորված կամ համալրված 76-րդ /51-րդ գվարդիական/, 136-րդ /15-րդ գվարդիական/ և 138-րդ /70-րդ գվարդիական/ հրաձգային դիվիզիաների շարքերում[54]:

Յայ ժողովրդի զավակները ակտիվ մասնակցություն ունեցան նաև Կովկասի ճակատամարտին, որը տեղի ունեցավ 1942թ. հուլիսի 27-ից մինչև 1943թ. հոկտեմբերի 9-ը: Յայերից 5 հոգու՝ 4-րդ օդային բանակի 230-րդ գրոհային ավիադիվիզիայի էսկադրիլիայի հրամանատար, կապիտան Սամսոն Մկրտումյանին, 159-րդ առանձին հրաձգային բրիգադի 3-րդ առանձին գումարտակի հրամանատար, ավագ լեյտենանտ Ղուկաս Մադոյանին, Յայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի քաջարի զինվորներ Յունան Ավետիսյանին, Սուրեն Առաքելյանին և Ջահան Կարախանյանին /վերջին երեքին՝ հետմահու/ շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Յետմահու Լենինի շքանշանով պարգևատրվեց 151-րդ հրաձգային դիվիզիայի 570-րդ առանձին սակրային գումարտակի սակրավոր, եֆրեյտոր Մեսրոպ Ղազարովը, որն իր կյանքի գնով պայթեցրեց Թերեք գետի վրա կանգուն մնացած միակ կամուրջը և փակեց թշնամու տանկերի ճանապարհը[55]: Լենինի շքանշանով պարգևատրվեց նաև նույն դիվիզիայի 379-րդ լեռնահրաձգային գնդի 5-րդ վաշտի հրամանատար, լեյտենանտ Կարո Յամբարյանը[56]: Յիշեցնենք, որ այդ դիվիզիան ռազմաճակատ էր մեկնել Կիրովականից /Վանաձոր/: Այդ դիվիզիայից, բացի Կովկասի ճակատամարտին ակտիվորեն մասնակցեցին նաև հայկական 89, 408 և 409-րդ, ինչպես նաև Յայաստանում կազմավորված 61, 320, 406 և 236-րդ հրաձգային դիվիզիաները: Ճակատամարտին ակտիվորեն մասնակցեցին և թշնամու դեմ տարած հաղթանակում իրենց ավանդը ներդրեցին Կովկասյան, ապա՝ Անդրկովկասյան ռազմաճակատի ռազմական խորհրդի անդամ, նավատորմի ծովակալ Յովհաննես Իսակովը, որը մարտերից մեկում ծանր վիրավորվելու հետևանքով զրկվեց ձախ ոտքից, «Սևաստոպոլ» հածանավի 1-ին հրետանային դիվիզիոնի հրամանատար, երրորդ կարգի կապիտան Միհրան Պետրոսյանը /հետագայում՝ դեր-ծովակալ/, Անդրկովկասյան

ռազմաճակատի հակաօդային պաշտպանության պետ, գնդապետ Գևորգ Չայլախյանը /հետագայում՝ իրետանու գեներալ-մայոր/, 38-րդ առանձին հրաձգային բրիգադի հրամանատար, գնդապետ Սմբատ Դանիելյանը, 15-րդ հեծյալ դիվիզիայի 42-րդ հեծյալ գնդի հրամանատար, փոխգնդապետ Մուշեղ Կարապետյանը, պահակային զրահանավի հրամանատար, ավագ լեյտենանտ Միքայել Սահակյանը, օդաչուներ՝ կապիտան Վարդգես Վարդանյանը, լեյտենանտ Յակոբ Մանուկյանը, Վազգեն Օգանեսովը /վերջին երկուսին հետագայում շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում/, բժշկական ծառայության մայոր Ռոզա Ջանջուտովան, Անդրկովկասյան ռազմաճակատի գլխավոր վիրաբույժ, բժշկական ծառայության գնդապետ Նիկոլայ Կուկուջանովը և շատ ուրիշներ:

Կովկասի հերոսամարտի ամենալարված շրջանում՝ 1943թ. փետրվարին, հայ ժողովուրդը հայրենասիրական նամակ-կոչով դիմեց ռազմաճակատում գտնվող իր զավակներին: Նամակի տակ ստորագրել էր 335316 մարդ: Այն վառ կերպով արտահայտում էր հայ ժողովրդի ջերմ հայրենասիրությունը, հիշեցնում նրա մարտական հարուստ ավանդույթների մասին, կոչ անում տուն վերադառնալ միայն հաղթանակով[57]: Նամակը հրատարակվեց բազմահազար օրինակներով՝ հայերեն և ռուսերեն ու տարածվեց բոլոր ռազմաճակատներում: Այն հրապարակվեց նաև "Правда", "Известия", "Комсомольская Правда" և բազմաթիվ այլ թերթերում: Նամակը լայն արձագանք գտավ ոչ միայն Կովկասյան, այլև մյուս ռազմաճակատներում մարտնչող հայ ռազմիկների սրտերում, որոնք իրենց պատասխան նամակում երդվեցին, որ «Սուրը պատյան չեն դնի, մինչև չհասնեն լիակատար հաղթության»[58]:

Կովկասի ճակատամարտում տարած հաղթանակում իրենց արժանի ավանդը ներդրեցին Խորհրդային Յայաստանի աշխատավորները: «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» կարգախոսը դարձավ հայ բանվորի, գյուղացու, մտավորականի, եկեղեցու սպասավորի աշխատանքային նշանաբանը: Նրանցից յուրաքանչյուրն իր բնագավառում արեց ամեն ինչ ռազմաճակատն ապահովելու զինամթերքով, զենքով, հանդերձանքով, պարենամթերքով, գրականության ու արվեստի գործերով և այլն: Ուստի, պատահական չէր, որ «Կովկասի պաշտպանության համար» մեդալով Յայաստանից պարգևատրվեցին 16800 մարդ, որոնց թվում էր նաև Ամենայն Յայոց Կաթողիկոս Գևորգ 6-րդ Չորեքչյանը, որը դեռևս կաթողիկոսի տեղապահ եղած ժամանակ աշխարհի տարբեր շրջաններում ապրող բոլոր հավատացյալ հայերին ուղարկած իր կոչերով ու կոնդակներով ակտիվորեն մասնակցել էր երկրի պաշտպանության գործին, մասնավորապես միջոցների

հանգամանքը հնարավորություն կազմակերպել «Սասունցի Դավիթ» տանկային երկու շարասյուն կառուցելու օգտին[59]:

Հայ ժողովրդի զավակներն իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև երկրորդ համաշխարհային պատերազմի մեջ արմատական բեկում մտցրած ամենախոշոր և վճռական նշանակություն ունեցած Կուրսկի ճակատամարտում /5 հուլիսի-23 օգոստոսի 1943թ./: Երկու հայորդիների՝ 11-րդ գվարդիական տանկային բրիգադի հրամանատարի տեղակալ, գվարդիայի գնդապետ Գրիգոր Կալուստովին և դասակի հրամանատար, գվարդիայի լեյտենանտ Վլադիմիր Իոնոսյանին (հետմահու) շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում[60]: Սուվորովի 1-ին աստիճանի զորավարական շքանշանով պարգևատրվեց Օրյոլյան գործողության հաղթանակում վճռական դեր կատարած 11-րդ բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Հովհաննես Բաղրամյանը. օգոստոսի 27-ին նրան շնորհվեց նաև գեներալ-գնդապետի կոչում[61]: Սուվորովի 1-ին աստիճանի շքանշանով պարգևատրվեց, ինչպես նաև ավիացիայի գեներալ-գնդապետի կոչման արժանացավ Կարմիր բանակի Ռազմաօդային ուժերի հրամանատարի տեղակալ, Ռազմաօդային ուժերի շտաբի պետ Սերգեյ Խուդյակովը /Արմենակ Խանփերյանց/, որը ճակատամարտի օրերին փոխհամաձայնեցնում էր 2-րդ և 5-րդ օդային բանակների գործողությունները: Երեք հայորդիներ, տանկիստներ մայոր Եփրեմ Ղարիբյանը, լեյտենանտ Թովմաս Չոբանյանը և հակատանկային հրանոթի հրամանատար Խաչիկ Մելիքսեթյանն արժանացան Լենինի շքանշանի[62]: Կուրսկի ճակատամարտում իրենց մարտավարական ունակություններով աչքի ընկան 50-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Սարգիս Մարտիրոսյանը, 74-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը, 44-րդ ծանր քնդանոթային-հրետանային բրիգադի հրամանատար, գնդապետ Ռաֆայել Հայրապետովը, 3-րդ մեքենայացված բրիգադի հրամանատար, գնդապետ Համազասպ Բաբաջանյանը, 183-րդ տանկային բրիգադի հրամանատար, փոխգնդապետ Սաքևոս Հակոբյանը, 3-րդ բանակի շտաբի հետախուզական բաժնի պետ, գնդապետ Նիկոլայ Թումանյանը, 32-րդ մոտոհրաձգային բրիգադի հրամանատարի տեղակալ, գնդապետ Լևոն Դարբինյանը, 112-րդ տանկային բրիգադի հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Սանասար Ոսյանը, 1142-րդ հրաձգային գնդի հրամանատար, մայոր Աշոտ Ալեքովը, 18-րդ գվարդիական օդադեսանտային գնդի հրամանատար, գնդապետ Զաքար Դերձյանը և շատ ուրիշներ, արժանանալով կառավարական բազմապիսի պարգևների: Ճակատամարտի ամբողջ ընթացքում Կարմիր բանակի ցամաքային գործողություններն օդից հուսալի կերպով պաշտպանում և երկնքում տեր ու

տնօրինություն էր անում խորհրդային ավիացիան, որի շարքերում մարտնչում էին հարյուրից ավելի հայ օդաչուներ: Հիշատակության է արժանի 2-րդ օդային բանակի 227-րդ գրոհային ավիադիվիզիայի 61-րդ գրոհային ավիագնդի օդաչու, ավագ լեյտենանտ Էդուարդ Բունիաթյանի անձնազոհ սխրանքը: 1943թ. օգոստոսի 3-ին, Բելգորոդի շրջանում մարտական հերթական առաջադրանքը կատարելիս, թշնամու զենիթային-հրետանային կրակից սկսեց այրվել խիզախ օդաչուի ինքնաթիռը: Անվեհեր օդաչուն չօգտվեց պարաշյուտից, այլ այրվող ինքնաթիռը մխրճեց հակառակորդի կենդանի ուժի ու տեխնիկայի կուտակումների վրա՝ իր կյանքի գնով ոչնչացնելով այն: Այդ սխրանքի համար ավագ լեյտենանտ Էդուարդ Բունիաթյանը ներկայացվեց Խորհրդային Միության հերոսի կոչման, սակայն վերադաս հրամանատարությունը նրան (հետմահու) պարգևատրեց Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով: Մինչ այդ, անվեհեր օդաչուն պարգևատրվել էր նաև Կարմիր դրոշի ու Կարմիր աստղի շքանշաններով[63]: Ճակատամարտում աչքի ընկած հայ օդաչուներից էին գրոհային մարտի վարպետներ Վլադիմիր Գիզգիզովը, Լյուդվիգ Ղասաբյանը, Շմավոն Մարտիրոսյանը, Խաչատուր Քենդերյանը, Ալբերտ Բունիաթյանը, Վարդգես Մարաբյանը, կործանիչ օդանավի օդաչուներ Լևոն Սարգսյանը, Զավեն Դավթյանը, Սերգեյ Բեգլարովը, Գևորգ Անտոնյանցը, ռմբակոծիչ օդաչուներ, 454-րդ ռմբակոծիչ ավիագնդի հրամանատար, մայոր Ավետիս Թաթուլովը, էսկադրիլիայի հրամանատարներ, մայորներ Անդրանիկ Վարդանյանցը, Սուրեն Ղազարովը, կապիտաններ Միհրան Ղարագյոզյանը, Վահրամ Հարությունովը, Կոնստանտին Կապրիելովը, ավագ լեյտենանտ Ավագ Մանուչարովը, լեյտենանտներ Ալեքսանդր Ռուստամյանը, Կոլյա Մանուչարյանը, Ցոլակ Մովսիսյանը, ֆրանսիացի օդաչուներից կազմավորված «Նորմանդիա» ավիագնդի ինժեներ, գվարդիայի կապիտան Սերգեյ Աղավելյանը և շատ ուրիշներ:

Կուրսկի ճակատամարտի հաղթական ավարտից հետո խորհրդային զորքերը լայնածավալ մարտեր սկսեցին Ուկրաինայի ազատագրման համար: Նրանց շարքերում ռուսների, ուկրաինացիների, բելոռուսների, ԽՍՀՄ մյուս ժողովուրդների ներկայացուցիչների հետ ուս-ուսի տված մարտնչեցին նաև հազարավոր հայ զինվորներ, սպաներ ու գեներալներ: Մարտերում իրենց սխրանքներով առավել աչքի ընկած 21 հայերի շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Նրանցից 14 հոգի այդ բարձր կոչմանն արժանացան Դնեպրը գետանցելու համար: Դնեպրի հաղթահարման հերոսներից էր Վորոնեժի ռազմաճակատի 3-րդ գվարդիական տանկային բանակի 69-րդ մեքենայացված բրիգադի 1-ին մոտոհրաձգային գումարտակի հրամանատար, կապիտան Գարեգին Բա-

լայանը /հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի Գյուլիստան գյուղից/: 1943թ. սեպտեմբերի 22-ին Չերկասկի մարզի Կանև քաղաքի մոտ առաջինների թվում, նրա գումարտակը, խիզախ հրամանատարի գլխավորությամբ գետանցել էր Դնեպրը և հենակետ գրավել Զարուբինցի գյուղի շրջանում: Սեպտեմբերի 25-ին կապիտան Բալայանը հերոսաբար զոհվել էր հենակետի պաշտպանության ժամանակ: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության 1943թ. հոկտեմբերի 23-ի հրամանագրով քաջ հայորդին, հետմահու, արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման[64]: ԽՍՀՄ Պաշտպանության նախարարի 1972թ. նոյեմբերի 5-ի թիվ 236 հրամանով կապիտան Բալայանի անունը հավերժ գրանցված է թիվ 587331 զորամասի 1-ին մոտոհրաձգային վաշտի անձնակազմի ցուցակում[65]: Դնեպրի գետանցման հերոսներից էր 19-րդ օդադեսանտային գնդի 3-րդ գումարտակի սանիտարական դասակի հրամանատար, բժշկական ծառայության լեյտենանտ Սերգեյ Գրիգորյանը, որը 1943թ. հոկտեմբերի 4-ին Վերխնեդնեպրովսկի շրջանի Աննովկա գյուղի մոտ, Դնեպրի աջ ափին գրաված հենակետի պաշտպանության ժամանակ մարմնով ծածկել է հրամանատարին և իր կյանքի գնով փրկել նրան անխուսափելի մահից[66]: Ուկրաինայում հերոսի կոչման արժանացած հայ քաջորդիներից էին 20-րդ գվարդիական մեքենայացված բրիգադի հրամանատար, գվարդիայի գնդապետ Համազասպ Բաբաջանյանը, 69-րդ մեքենայացված բրիգադի հրամանատար, գնդապետ Լևոն Դարբինյանը, 315-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալ, գնդապետ Ասքանազ Կարապետյանը, 209-րդ գվարդիական հրաձգային գնդի հրամանատար, գվարդիայի փոխգնդապետ Գեղեոն Միքայելյանը, 503-րդ գրոհային ավիադիվիզիայի էսկադրիլիայի հրամանատար, կապիտան Արմեն Հայրիևը և ուրիշներ:

Ուկրաինայի ազատագրման տարեգրության մեջ ոսկե տառերով է գրված 38-րդ բանակի 50-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Սարգիս Մարտիրոսյանի անունը, որի զորքերը 1943թ. նոյեմբերի 6-ին առաջինների թվում մտան Կիև և գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրեցին Ուկրաինայի մայրաքաղաքը: Ռուսական բանակում ավանդաբար գոյություն ունեցող կարգի համաձայն, գեներալ Մարտիրոսյանը, որպես Կիևն առաջինն ազատագրող զորքերի հրամանատար, նշանակվեց քաղաքի կայազորի պարետ: Նա պարգևատրվեց նաև Լենինի շքանշանով[67]: Ավաղ, Ուկրաինայի ազատագրման մարտերում քաջաբար զոհվեց գեներալի միակ որդին՝ Մարսել Մարտիրոսյանը:

Կիևի ազատագրման հերոսներից էր 38-րդ բանակի 22-րդ գվարդիական տանկային բրիգադի 207-րդ տանկային գումարտակի «Տ-34»

տանկերի վաշտի հրամանատար, գվարդիայի ավագ լեյտենանտ Կիմիկ Ավետիսյանը (Ախալքալաքի Սուլդա գյուղից): Նրա վաշտն առաջինը մտավ Կիև եւ Հաղթանակի դրոշ բարձրացրեց Միությունների տան վրա: Այդ սխրանքի համար խիզախ ջավախքեցին ներկայացվեց Խորհրդային Միության հերոսի կոչման, սակայն 1-ին Ուկրաինական ռազմաճակատի հրամանատարությունը նրան պարգեւատրեց Բոգդան Խմելնիցկու 3-րդ աստիճանի շքանշանով:

Ուկրաինայի ազատագրման մարտերին ակտիվորեն մասնակցած հայ գեներալներից էին 60-րդ բանակի շտաբի պետ, գեներալ-մայոր Գևորգ Տեր-Գասպարյանը, 46-րդ համազորային, ապա 6-րդ տանկային բանակի ռազմական խորհրդի անդամ, գեներալ-մայոր Հայկ Թումանյանը, 15-րդ հրաձգային կորպուսի, ապա՝ 5-րդ գվարդիական տանկային բանակի հրետանու պետ, գեներալ-մայոր Նիկոլայ Հովհաննիսյանը, նրա որդին, մարտկոցի հրամանատար, կապիտան Ռեմ Հովհաննիսյանը, որին հետագայում շնորհվեց գեներալ-մայորի կոչում. Գևորգ Տեր-Գասպարյանը պարգեւատրվեց Սուվորովի 1-ին աստիճանի, իսկ Հայկ Թումանյանը՝ Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշանով: Հետմահու, Լենինի շքանշանով պարգեւատրվեց 21-րդ մեքենայացված բրիգադի հրամանատար, գվարդիայի փոխգնդապետ Նավասարդ Հարությունյանը /Կապանի շրջանի Շիշկերտ գյուղից/, որի զորամասերը 1943թ. դեկտեմբերի 28-ին ազատագրեցին Վիննիցայի մարզի Կազատին քաղաքը: 1944թ. հունվարի 8-ին Վիննիցայի մարզի Իլինեցկի շրջանի Տրոշչա գյուղի համար մղված մարտերում խիզախ սյունեցին զոհվեց հերոսի մահով[69]: Լուցկ և Բրոդի քաղաքների ազատագրման մարտերում աչքի ընկավ 21-րդ գվարդիական հեծյալ գնդի հրամանատար, գնդապետ Արսեն Ավքանդիլյանը /հետագայում՝ գեներալ-մայոր/:

Ուկրաինայի ազատագրմանն ակտիվորեն մասնակցեցին նաև Հայաստանում կազմավորված կամ համալրված 9 դիվիզիաներ: Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիան արժանացավ Կիրովոգրադյան կոչման, պարգևատրվեց Բոգդան Խմելինցկու 2-րդ աստիճանի շքանշանով: Խարկովյան կոչմանն արժանացան 15-րդ գվարդիական /նախկին 136-րդ/, Նիկոլաևյան՝ 61-րդ, Գլուխովյան՝ 70-րդ գվարդիական /նախկին 138-րդ/, Դնեպրոպետրովսկյան՝ 236-րդ, Օդեսայի՝ 320-րդ, Ժմերինյան՝ 151-րդ, Կիև-Ժիտոմիրյան՝ 23-րդ /կազմավորվել էր նախկին Հայկական 408-րդ, ապա՝ 7-րդ բրիգադի հիման վրա/ հրաձգային դիվիզիաները: Խարկովի և Պոլտավայի մարզի բազմաթիվ բնակավայրերի ազատագրմանն ակտիվորեն մասնակցեց 51-րդ գվարդիական /նախկին Հայկական 76-րդ/ հրաձգային դիվիզիան:

Ուկրաինայի ազատագրման մարտերին ակտիվորեն մասնակցել են

նաև հայ պատիզանները: Լեգենդար Կովպակի պարտիզանական միավորման կազմում մարտնչել է գերազանցապես հայերից բաղկացած «Յաղթանակ» ջոկատը՝ Սերգեյ Յարությունյանցի, գեներալ Նաումովի միավորման կազմում, «Ա. Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատը»՝ Արամայիս Յովսեփյանի հրամանատարությամբ և այլն:

Կովկասի ճակատամարտի հաղթական ավարտից և Ձախափնյա Ուկրաինայի ազատագրումից հետո՝ 1943թ. հոկտեմբերից մինչև 1944թ. մայիսի 12-ը, ազատագրվեցին Կերչ և Ղրիմ թերակղզիները: Այդ մարտերում իրենց սխրանքներով առավել աչքի ընկած 10 հայորդիների շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Նրանցից 5-ը Յայկական 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիայի զինվորներ ու սպաներ էին: Դիվիզիան Կերչի և Ղրիմի ազատագրման համար մղած կռիվներում նոր փառքով օծեց իր մարտական դրոշները՝ պարգևատրվելով Կարմիր աստղի և Կարմիր դրոշի շքանշաններով, իսկ նրա 390-րդ և 400-րդ հրաձգային գնդերին շնորհվեց Սևաստոպոլյան պատվավոր անուն: Վերոհիշյալ մարտերում ցուցաբերած քաջության համար 6 հայորդիներ արժանացան Լենինի շքանշանի[69]:

Ղրիմի ազատագրումից հետո և Աջափնյա Ուկրաինայի համար մղված մարտերին զուգընթաց, 1944 թ. հունիսի 23-ից մինչև օգոստոսի 29-ը իրագործված Բելոռուսական մարտական գործողության հետևանքով, ամբողջապես ազատագրվեց Բելոռուսիան: Մարտերում առավել աչքի ընկած 9 հայորդիների շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Նրանց թվում էին՝ 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Յովհաննես Բաղրամյանը, որը փայլուն կերպով իրագործեց հակառակորդի՝ Գորոդոկյան և Վիտեբսկյան խմբավորումների շրջապատման ու ոչնչացման գործողությունը, 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 158-րդ գվարդիական հրաձգային գնդի 3-րդ գումարտակի գնդացրային հաշվարկի հրամանատար, գվարդիայի եֆրեյտոր Արամայիս Սարկիսովը, որը 1944թ. հունիսի 25-ին Արևմտյան Դվինա գետի ափին գրաված հենակետի պաշտպանության մարտում իր կյանքի գնով փրկել էր գումարտակի հրամանատարին անխուսափելի մահից, 74-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը, որը Գոմելի մարզի Բրագինսկի շրջանում առաջիններից թվում էր գետանցել Դնեպրը ու հենակետ գրավել նրա աջ ափին և այլն: Բելոռուսիայի ազատագրման մասնակիցների թվում էին՝ 1-ին Բելոռուսական ռազմաճակատի քաղվարչության պետ, գեներալ-լեյտենանտ Սերգեյ Գալաջևը, 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի քաղվարչության պետ, գեներալ-մայոր Սերգեյ Կազբինցևը, 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի սանիտարական վար-

չության պետ, բժշկական ծառայության գեներալ-մայոր Ավետիք Բուռնազյանը, 49-րդ բանակի շտաբի պետ, գեներալ-մայոր Ստեփան Կինոսյանը, 11-րդ գվարդիական հրաձգային կորպուսի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Բագրատ Առուշանյանը, 290-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Իսահակ Գասպարյանը, 18-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի հրամանատար, գնդապետ Սմբատ Դանիելյանը, 146-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գնդապետ Ներսես Բալոյանը և շատ ուրիշներ, որոնք գերմանաֆաշիստական զավթիչներից եղբայրական բելոռուս ժողովրդի ազատագրման գործում իրենց անձնվեր պայքարով էլ ավելի ամրապնդեցին հայ և բելոռուս ժողովուրդների բարեկամությունը: Բելոռուսիայի Վիտեբսկ և Պոլոցկ քաղաքների ազատագրման մարտերին ակտիվորեն մասնակցելու համար «Վիտեբսկյան» պատվավոր անուն ստացավ 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիան, նրա գնդերին շնորհվեց «Պոլոցկյան» պատվանուն: Այդ մարտերում դիվիզիային աջակցում էր սփյուռքահայերի հանգանակությամբ ստեղծված «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը[70]:

Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմների պատմության մեջ կարևոր նշանակություն ունեցավ Լենինգրադի /այժմ՝ Սանկտ-Պետերբուրգ/ հերոսական պաշտպանությունը, որը տևեց շուրջ 900 օր՝ 1941թ. հուլիսի 10-ից մինչև 1944թ. օգոստոսի 9-ը: Լրիվ շրջափակման մեջ հայտնված հերոս քաղաքը ոչ միայն դիմացավ սովին, ցրտին և անընդհատ ռմբակոծություններին, այլև կարողացավ հավաքել ուժերը, ճեղքել պաշարումը, ապա կործանիչ հարվածներով ջախջախել թշնամուն: Օդաչուներ Լազար Չափչախովին, Նելսոն Ստեփանյանին, Գրիգոր Փալանջյանին, տանկիստ Ալեքսանդր Մնացականյանին, ավելի ուշ նաև ծովակալ Հովհաննես Իսակովին, ինչպես նաև հայաստանցի օդաչու Եֆիմ Ուդալցովին շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Հերոս քաղաքի պաշտպանների թվում էին 42-րդ բանակի ռազմական խորհրդի անդամ, գեներալ-մայոր Բենիամին Գալստյանը, որը զոհվեց մարտական պոստում 1942թ. դեկտեմբերի սկզբներին Պուլկովոյի բարձունքում, 1-ին աշխարհազորային դիվիզիայի հետախուզական ջոկատի հրամանատար Անդրանիկ Գրիգորյանը /Անդրեյ Գրիգորին/, որն իր կյանքի գնով ապահովեց մարտական ընկերների նահանջը Գատչինայում, բժշկուհիներ Ռուզաննա և Սոֆյա Լալայան քույրերը /վերջինս զոհվեց վիրահատություն կատարելիս/, Լենինգրադի պաշարումը ճեղքելու պատմական ակտի տակ ստորագրած մայոր Հայկ Մելքոնյանը, կորպուսի հրետանու հրամանատար, գնդապետ Գրիգոր Ասատուրովը, դիվիզիայի հրետանու պետ, փոխգնդապետ Սամվել Հարութ-

յունյանը, գնդի հրամանատար, փոխգնդապետ Արշալույս Հայրապետյանը, յոթ նավերից բաղկացած խմբի հրետանու կրակը ղեկավարող, առաջին կարգի կապիտան Արտավազդ Սագոյանը /հետագայում՝ դեր-ծովակալ/, դասակի հրամանատար, լեյտենանտ Սերո Խանզադյանը /հետագայում՝ հայ մեծանուն գրող/, 45-րդ գվարդիական հրաձգային գնդի շարքային զինվոր Ասատուր Պետրոսյանը, որը հերոսաբար զոհվեց 1944թ. հունիսի 25-ին և շատ ուրիշներ, որոնք, մարտընչելով Հայաստանից շուրջ երեք հազար կիլոմետր հեռու, արիաբար պաշտպանեցին ռուսական փառքի հերոս քաղաքը Նևայի ափին և իրենց արժանի ավանդը ներդրեցին Լենինգրադի ճակատամարտում տարած հաղթանակում[71]:

Լենինգրադի հերոսամարտին զուգընթաց, մարտեր էին գնում նրանից հյուսիս՝ Կարելոֆիննական ԽՍՀ և Մուրմանսկի մարզի տարածքներում, որոնք ավարտվեցին 1944թ. հոկտեմբերին՝ Պետսամո /Պեչենգա/ և Կիրկենես քաղաքների ազատագրումով: Անդրբևեռում՝ Պետսամո /Պեչենգա/ չսառչող նավահանգստի ազատագրման մարտերում ցուցաբերած քաջության համար Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացավ «Տ-34» տանկի հրամանատար, գվարդիայի լեյտենանտ Աշոտ Ասրիյանը[72]: Կարելյան ճակատում աչքի ընկած հայ քաջորդիներից էին գումարտակի հրամանատարի տեղակալ, ավագ լեյտենանտ Աբիսակ Բալասանյանը, որը հետմահու պարգևատրվեց Լենինի շքանշանով /Նախիջևանի Ազնաբերդ գյուղից/, 32-րդ առանձին դահուկային բրիգադի հրամանատար, փոխգնդապետ Հովսեփ Անտոնյանը, որը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով, 1236-րդ բանակայինքնդանոթային հրետանային գնդի դիվիզիոնի հրամանատար, կապիտան Գերասիմ Մանուչարյանը, 19-րդ բանակի 208-րդ առանձին զենիթային-հրետանային դիվիզիոնի հրամանատարի քաղգծով տեղակալ, մայոր Օնիկ Մինասյանը (Կապանի շրջանի Շիկահող գյուղից), որոնք պարգևատրվեցին Կարմիր աստղի շքանշանով և շատ ուրիշներ[73]:

Բազմաթիվ հայորդիներ իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև Էստոնիայի, Լատվիայի և Լիտվայի Խորհրդային հանրապետությունները գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրման գործում: Նրանց թվում էր 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ, Խորհրդային Միության հերոս Հովհաննես Բաղրամյանը, Վիլնյուսն ազատագրող 215-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր, Խորհրդային Միության հերոս Անդրանիկ Ղազարյանը, Լատվիայի Վեսիտե քաղաքն ազատագրող 14-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Բագրատ Առուշանյանը, որին շուտով շնորհվեց գեներալ-լեյտենանտի կոչում, 43-րդ բանակի հրամանատա-

րի տեղակալ, գեներալ-մայոր Հայկ Մարտիրոսյանը. 33-րդ բանակի շտաբի պետ, գեներալ-մայոր Ստեփան Կինոսյանը, 1-ին հրաձգային կորպուսի հրետանու պետ, գեներալ-մայոր Կարապետ Հախնազարյանը, 338-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Համայակ Բաբայանը, 146-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Սերգեյ Կարապետյանը, 32-րդ տանկային բրիգադի հրամանատարի տեղակալ, գնդապետ Մուշեղ Մինասյանը /հետագայում՝ գեներալ-մայոր/, 19-րդ տանկային կորպուսի հրետանու պետ, գնդապետ Հաբեթնակ Սաֆարյանը, 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի սանիտարական վարչության պետ, բժշկական ծառայության գեներալ-լեյտենանտ Ավետիք Բուռնազյանը, 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի քաղվարչության պետ, գեներալ-մայոր Սերգեյ Կազբինցևը և շատ ուրիշներ: 1944թ. դեկտեմբերի 14-ին Լատվիայի Լիեպայա քաղաքի մոտ՝ Լիբավայի ծովախորշի շրջանում տեղի ունեցած օդային մարտում հերոսաբար զոհվեց Բալթյան նավատորմի ռազմաօդային ուժերի 11-րդ գրոհային ավիադիվիզիայի 47-րդ գրոհային ավիագնդի հրամանատար, Խորհրդային Միության հերոս, գվարդիայի փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանը, որն այրվող ինքնաթիռն ուղղեց թշնամու կենդանի ուժի ու տեխնիկայի կուտակումների վրա և իր կյանքի գնով ոչնչացրեց նրանցից շատերին: Լենինգրադի և Մերձբալթիկայի ծովամերձ շրջաններում կատարած 239 մարտական թռիչքների ժամանակ հակառակորդի ծովային ու ցամաքային ուժերին մեծ կորուստներ պատճառելու և մարտերում ցուցաբերած հերոսության համար, լեգենդար օդաչուն ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1945թ. մարտի 6-ի հրամանագրով, հետմահու արժանացավ Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչման: Լատվիայի և Լիտվայի ազատագրման մարտերում կատարած անօրինակ սխրանքների համար Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացան գվարդիայի ավագ Համայակ Սնոպյանը և սերժանտ Վաչագան Վանցյանը /վերջինս՝ հետմահու/: Խորհրդային Մերձբալթիկայի ազատագրման մարտերում ցուցաբերած խիզախության համար, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1945թ. մարտի 24-ի հրամանագրով, 138-րդ գվարդիական հրետանային գնդի հրանոթի նշանառու, գվարդիայի ավագ սերժանտ Խաչիկ Մելիքսեթյանը, 473-րդ հրաձգային գնդի հրաձգային ջոկի հրամանատար, ավագ Նարիբեկ Ավետիսյանը և 140-րդ հրաձգային գնդի սակրային դասակի հրամանատարի օգնական, ավագ սերժանտ Ժորա /Գևորգ/ Իսրայելյանը պարգևատրվեցին Փառքի 1-ին աստիճանի շքանշանով և հայերից առաջինները դարձան զինվորական Փառքի այդ եռաստիճան շքանշանի լրիվ ասպետ: Հիշեցնենք, որ Ժորա Իսրայելյանը Կարմիր բանակի

Փառքի 3-րդ աստիճանի շքանշանով պարգևատրված առաջին զինվորն էր:

Սերծբալթիկայում իր խիզախությամբ աչքի ընկած հայորդիներից էր նաև 15-րդ օդային բանակի 15-րդ առանձին ինժեներաօդանավակայանային գումարտակի ավտոտրանսպորտային ջոկի հրամանատար, սերժանտ Մուշեղ Վարազդատի Պետրոսյանը (Կապանի շրջանի Կավարտ գյուղից), որը պարգևատրվեց «Մարտական ծառայությունների համար» մեդալով:

Լատվիայի և Լիտվայի ազատագրման մարտերին գործուն մասնակցություն ունեցավ 51-րդ գվարդիական /նախկին Հայկական 76-րդ լեռնահրաձգային/ հրաձգային դիվիզիան, որին դարձյալ աջակցում էր «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը: Հաղթանակի լուրը գվարդիականներն իմացան 1945թ. մայիսի 9-ի առավոտյան Լիտվայի Մեծմալի բնակավայրի շրջանում[74]:

Հայ ժողովրդի զավակներն այնուհետև ակտիվորեն մասնակցեցին ֆաշիզմի լծից Արևելյան, Հարավարևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների ժողովուրդների ազատագրման մարտերին, գրոհեցին Բեռլինը, Ռայխստագի պատերին հաղթողի իրավունքով գրեցին իրենց անունները և հայկական քոչարին քնդացրին այնտեղ: Ֆաշիստական Գերմանիան մայիսի 8-ի գիշերը՝ լույս 9-ի առավոտյան, Բեռլինի Կառլսհորստ արվարձանում ստորագրեց անվերապահ կապիտուլյացիայի մասին ակտը: Դրանով ավարտվեց Հայրենական մեծ պատերազմը: Պատերազմի հաղթական շրջանի այդ մարտերին մասնակցեցին մի քանի տասնյակ հազար հայորդիներ, որոնցից 34-ին շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում, նրանցից 19-ը՝ Լեհաստանի, 2-ը՝ Հունգարիայի, մեկական՝ Ռումինիայի, Չեխոսլովակիայի, Հարավսլավիայի և Ավստրիայի ազատագրման և 9-ը՝ Գերմանիայում տեղի ունեցած մարտերում ցուցաբերած քաջագործությունների համար: 23 հայորդիներ պարգևատրվեցին Փառքի 1-ին աստիճանի շքանշանով՝ դառնալով զինվորական փառքի այդ պատվավոր շքանշանի լրիվ ասպետներ: Նրանցից 13-ն այդ շքանշանին արժանացան Գերմանիայի /այդ թվում և Արևելյան Պրուսիայի/, 8-ը՝ Լեհաստանի, մեկական՝ Չեխոսլովակիայի և Ավստրիայի տարածքներում իրագործված մարտական գործողությունների ժամանակ կատարած սխրանքների համար: Մեկ հայորդի, ավագ սերժանտ Սերգեյ Սիվիկյանն այդ պարգևին էր արժանացել Մոլդովայի ազատագրման մարտերում[75]: Բեռլինը գրավողների առաջին շարքերում էին 11-րդ գվարդիական տանկային կորպուսի հրամանատար, գվարդիայի գնդապետ, Խորհրդային Միության հերոս Համազասպ Բաբաջանյանը, որը ներկայացվեց կրկնակի հերոսի կոչման, սակայն

պարգևատրվեց Սուվորովի 1-ին աստիճանի շքանշանով և արժանացավ տանկային զորքերի գեներալ-մայորի կոչման, 35-րդ մեքենայացված բրիգադի հրամանատար, գեներալ-մայոր Հմայակ Բաբայանը, որին հետմահու շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում, 23-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 66-րդ գվարդիական հրաձգային գնդի ավտոմատավոր, գվարդիայի շարքային Սարիբեկ Չիլինգարյանը, որը 1945թ. ապրիլի 23-ին առաջիններից մեկը Հաղթանակի դրոշ բարձրացրեց Բեռլինի կենտրոնում գտնվող ամենաբարձր շենքի տանիքին՝ արժանանալով հերոսի կոչման, 2-րդ գվարդիական տանկային բանակի 48-րդ գվարդիական տանկային դասակի հրամանատար, գվարդիայի լեյտենանտ Ալեքսանդր Ստեփանյանը, որն ապրիլի 25-ին առաջինների թվում հաղթահարեց Բեռլինի ջրանցքներն ու Շպրեե գետը և նպաստեց քաղաքի կենտրոնում Հաղթանակի դրոշի բարձրացմանը՝ ներկայացվելով Խորհրդային Միության հերոսի կոչման, սակայն խիզախ հայորդին պարգևատրվեց Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով /մինչ այդ նա պարգևատրված էր Կարմիր դրոշի 2, Կարմիր աստղի, Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշաններով/[76]: Ա. Դ. Ստեփանյանը հայերից միակն է, որ մասնակցել է Կարմիր հրապարակում տեղի ունեցած 6 զորահանդեսի /07.11.1941, 24.06.1945, 09.05.1985, 09.05.1990, 09.05.1995 և 09.05.2000/:

Բեռլինի գրավման մարտերում աչքի ընկնելու համար Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվեց Հայկական 89-րդ Թամանյան, Կարմիր դրոշի և Կարմիր աստղի շքանշանակիր հրաձգային դիվիզիան, իսկ Ռումինիայի, Հունգարիայի և Չեխոսլովակիայի ազատագրման մարտերին ակտիվորեն մասնակցած Հայկական 409-րդ Կիրովոգրադյան, Բոգդան Խմելնիցկու 2-րդ աստիճանի շքանշանակիր հրաձգային դիվիզիան Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավան ազատագրելու համար, ստացավ «Բրատիսլավյան» պատվավոր անվանումը[77]:

Հայ ժողովրդի զավակներն ակտիվորեն մասնակցեցին նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի եզրափակիչ մարտական գործողությանը Հեռավոր Արևելքում, որի հետևանքով 1945թ. օգոստոսի 9-ից մինչև սեպտեմբերի 2-ը ջախջախվեց ֆաշիստական Գերմանիայի դաշնակից միլիտարիստական Ճապոնիան: Սեպտեմբերի 2-ին Տոկիոյի ծովածոցում, ամերիկյան «Միսսուրի» գծանավի վրա ստորագրվեց Ճապոնիայի անվերապահ կապիտուլյացիայի ակտը, որով և ավարտվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը:

Անդրբայկալյան ռազմաճակատի 12-րդ օդային բանակի հրամանատարը ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովն էր /Արմենակ Խանփեր-

յանց/. նույն ռազմաճակատի ֆինանսական բաժնի պետը՝ գեներալ-մայոր Ռոդիոն Մինասովը, 2-րդ Հեռավորարևելյան ռազմաճակատի իրետանու հրամանատարը՝ Խորհրդային Միության հերոս, գեներալ-լեյտենանտ Միքայել Պարսեղովը, նույն ռազմաճակատի ռազմասանիտարական վարչության պետը՝ բժշկական ծառայության գեներալ-լեյտենանտ Ավետիք Բուռնազյանը, 6-րդ գվարդիական տանկային բանակի ռազմական խորհրդի անդամը տանկային զորքերի գեներալ-լեյտենանտ Հայկ Թումանյանը, Սերձծովյան բանակի հակաօդային պաշտպանության զորքերի շտաբի պետը՝ հրետանու գեներալ-մայոր Գևորգ Չալլախյանը, 10-րդ օդային բանակի հրամանատարի տեղակալը՝ ավիացիայի գեներալ-մայոր Գրիգոր Տոլմաչևը, 215-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարը՝ գեներալ-մայոր, Խորհրդային Միության հերոս Անդրանիկ Ղազարյանը, 84-րդ հեծյալ դիվիզիայի հրամանատարը՝ գեներալ-մայոր Տիմոֆեյ Դեղեօղլյանը, 361-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարը՝ գնդապետ Առաքել Օգանեզովը, 39-րդ հրաձգային դիվիզիայի հրետանու պետը՝ փոխգնդապետ Գավրիլ Կամոևը, 278-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարը՝ գնդապետ Կոնստանտին Լազարևը /վերջին երբեին հետագայում շնորհվեց գեներալ-մայորի կոչում/, 213-րդ բանակային թնդանոթահրետանային բրիգադի հրամանատարը՝ գնդապետ Ռաֆայել Հայրապետովը, 56-րդ ծանր ականանետային բրիգադի հրամանատարը՝ գնդապետ Սամվել Հարությունյանը, 72-րդ ծովային հետևակի բրիգադի հրամանատարը՝ գնդապետ Բագրատ Միտոյանը, Սախալինյան ռազմական նավատորմի շտաբի պետը՝ առաջին կարգի կապիտան Վալերիան Սուրաբեկովը /հետագայում՝ փոխ-ծովակալ/, Հեռավոր Արևելքի զինվորական հաղորդակցությունների վարչության ռազմական փոխադրումների բաժնի պետը՝ գնդապետ Ռաֆայել Մարտիրոսյանը, Հեռավորարևելյան երկաթուղային հատուկ օկրուգի պետի տեղակալը՝ գնդապետ Արամ Աղաբեկյանը /վերջին երկուսին շնորհվեց տեխնիկական զորքերի գեներալ-մայորի կոչում/ և շատ ուրիշներ:

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում չափազանց կարևոր գործ կատարեցին անտեսանելի ճակատի մարտիկները լեգենդար հետախույզներ, գեներալ-լեյտենանտ Հայկ Հովակիմյանը, գեներալ-մայորներ Իվան Աղայանցը, Միքայել Ալավերդովը, Վյաչեսլավ Կևորկովը, գնդապետ, Խորհրդային Միության հերոս Գևորգ Վարդանյանը, նրա կինը Գոհար Վարդանյանը և շատ ուրիշներ, որոնց կատարած սխրանքները, հայտնի պատճառներով, դեռևս չեն լուսաբանվել հայ պատմագրության կողմից:

Երկրորդ համաշխարհային պատերազմում տարած հաղթանակում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև հայ պարտիզանները: Միայն

Ուկրաինայում և Բելոռուսիայում մարտնչել են ավելի քան 2000, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում՝ 500. Մերձբալթիկայում, Լենինգրադի և Կալինինի մարզերում՝ 200 հայ պարտիզաններ: Մենք արդեն նշել ենք Ուկրաինայում մարտնչած, գերազանցապես հայերով համալրված «Հաղթանակ» և «Ա. Ի. Միկոյանի անվան պարտիզանական ջոկատների» մասին, որոնց շարքերում մարտնչում էին շուրջ 400 հայ պարտիզաններ: Ֆրանսիայում հայ ռազմագերիներից բաղկացած պարտիզանական գունդն իր շարքերում հաշվում էր ավելի քան 1200, իսկ Հունաստանում մարտնչած «Ազատություն» ջոկատը՝ 1000 հայորդիներ: Իրենց խիզախությամբ առավել աչքի ընկած պարտիզաններից էին՝ Սերգեյ Հարությունյանցը, Արամայիս Հովսեփյանը, Սուխարիչ Հարությունյանը, Հովհաննես Պետոյանը, Կրասնոդոնի «Երիտասարդ գվարդիա» վրիժառուների կազմակերպության անդամներ Գեորգի Հարությունյանցը, Մայա Փեհլիվանյանը /Ուկրանիա/, Խաչիկ Մաթևոսյանը, Հենրիկ Զաքարյանը, Վահան Գրիգորյանը, Վահան Աղաջանյանը /Բելոռուսիա/, Հայկ և Թամարա Մարտիրոսյանները, Աշոտ Հայրապետովը, Արամ Տերյանը /Ղրիմ/, Արտյոմ Սաղումյանը, Անդրանիկ Մալխասյանը, Միսաք Փարթայանը /Ռուսաստան/, Աշոտ Սարաբյանը / Լիտվա/, Հենրիկ Թումանյանը, Սերգեյ Կուսիկյանը, Արարատ Նավոյանը /Լեհաստան/, Արտեմ Պետրոսյանը, Հակոբ Իլիկչյանը, Արթուր Բաբայանը /Չեխոսլովակիա/, Գևորգ Քոլոզյանը, Մկրտիչ Դաշտոյանը, Մխիթար Գրիգորյանը, Սերժիո Դավթյանը /Իտալիա/, Գրիգոր Միրզախանյանը, Անդրանիկ Միրզոյանը, Տիգրան Ալիխանյանը, Հմայակ Բադալյանը /Հոլանդիա/, Ալեքսանդր Ղազարյանը, Բարթուղ Պետրոսյանը, Լևոն Տիտանյանը, Ստեփան Յաղջյանը, Միիրան Եղիազարյանը /Ֆրանսիա/ և ուրիշներ[78]:

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում իրենց ծանրակշիռ ավանդը ներդրեցին նաև սփյուռքահայերը: Պատերազմի տարիներին նրանց ճնշող մեծամասնությունը կողմնորոշվեց դեպի մայր հայրենիքը և համախմբվեց ազգային ճակատի կազմակերպությունների մեջ՝ նյութական ու բարոյական օգնություն ցուցաբերելով մարտնչող հայրենիքին: Սփյուռքահայերի հանգանակած միջոցներով Կարմիր բանակի համար կառուցվեցին «Սասունցի Դավիթ» և «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուները: Հազարավոր սփյուռքահայեր ֆաշիզմի դեմ պայքարել են նաև զենքը ձեռքներին, արիությամբ կատարելով իրենց քաղաքացիական պարտքն այն երկրների բանակների կազմում, որտեղ ապաստան էին գտել 1915թ. եղեռնից հետո: Միայն ԱՄՆ-ի բանակում մարտնչել են շուրջ 20000 հայեր: Նրանցից լեյտենանտ Երվանդ Դերվիշյանն արժանացավ Ամերիկայի հերոսի՝ «Կոնգրեսի պատվո մեդալ» շքանշանի, որով պատերազմի տարիներին ԱՄՆ-ի բանակում

պարգևատրվել է ընդամենը 87 մարդ: Ամերիկյան ռազմաօդային ուժերի խիզախ օդաչուներից էին՝ Չարլզ Տերտերյանը, Սեմ Պարսամյանը, Էնդրյու Կոշտոյանը /որը զոհվեց Անգլիայում/, Ջերարդ Գևորգյանը, ժիրայր. Հայկ և Արծվիկ Կատարյան եղբայրները և շատ ուրիշներ: Ամերիկյան բանակի գեներալներ դարձան Ջորջ Մարտիկյանը և Հայկ Շեքերջյանը, սիրիական բանակում՝ գեներալ-լեյտենանտ Արամ Կարամանուկյանը, Բուլղարիայում՝ Գաբրիել Գաբրիելյանը: Ավելի քան 30000 հայորդիներ կային Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի բանակներում, որոնց մի զգալի մասը զորակոչվել էր Եգիպտոսից, Սիրիայից, Լիբանանից և այլ երկրներից: Անգլիայի և Ֆրանսիայի երկնակամարում տեղի ունեցած օդային մարտերում են հերոսացել ռազմական օդաչուներ Նոյել, Ջեկ և Լևոն Աղազարյան եղբայրները, որոնցից առաջինը զոհվեց Անգլիայում, իսկ երկրորդը՝ Ֆրանսիայում կատարած մարտական թռիչքների ժամանակ: Նրանց քույրը՝ Մոնիկ Աղազարյանը, պատերազմի տարիներին ռազմական օդանավակայանի պատասխանատու ծառայող էր: Հազարավոր սփյուռքահայեր ընդգրկված էին ֆաշիստական Գերմանիայի կողմից զավթված երկրների դիմադրական-պարտիզանական շարժման շարքերում: Իր անմար սխրանքով հռչակվեց բանաստեղծ Միսաք Մանուշյանը, որը հետմահու արժանացավ Ֆրանսիայի դիմադրական շարժման հերոսի կոչման: Մանուշյանի խմբին և հայ ռազմագերիներին մեծ օգնություն ցուցաբերեցին աշխարհահռչակ Շառլ Ազնավուրի ծնողները՝ Մամիկոն և Քնար, քույրը՝ Աիդա Ազնավուրյանները, անձամբ Շառլը: Հանուն Ֆրանսիայի ազատության իրենց կյանքը զոհեցին հայ ժողովրդի անվեհեր զավակներ Լուիզա /Լաս/ և Արփիար Ասլանյանները: Ավելի քան 300 հայորդիներ ընկան Հունաստանի պարտիզանական կռիվներում: Նրանց թվում էին Անդրանիկ և Երվանդ Ղուկասյանները, Վահրամ Սաքայանը, Սիլվեստրո Ղալեյանը և շատ ուրիշներ: Ամբողջ Բուլղարիայով մեկ թնդաց հերոսուհի պարտիզան Սաշկայի /Հերմինե Ռազգրադյան/ անունը, որին ֆաշիստները մատնությամբ բռնեցին և տանջամահ արեցին: Հարավսլավիայում պարտիզանների մեջ հռչակված հերոսներից էր Վարդուշ Սուքիասիչը /Սուքիասյան/:

Սփյուռքահայության միայն մի չնչին մասը՝ Հայ հեղափոխական դաշնակցության ղեկավարներից ոմանք, չմիացան ազգային ճակատի առաջադիմական ուժերին: 1942թ. դեկտեմբերին նրանք Բեռլինում ստեղծեցին «Հայ ազգային խորհուրդ»՝ Արտաշես Աբեղյանի նախագահությամբ: Խորհրդի անդամներից էին Գարեգին Նժդեհը, Դրաստամատ Կանայանը /Դրո/, Աբրահամ Գյուլխանդանյանը /փոխնախագահ/, Վահան Փափազյանը, Դավիթ Դավիթխանյանը, Սահակ Տեր-Թովմասյանը

և Հարություն Բաղդասարյանը /քարտուղար/: Չնայած խորհուրդը գործում էր ֆաշիստական Գերմանիայի կողմից զավթված ԽՍՀՄ արևելյան շրջանների նախարարության հովանավորության ներքո, որի հիմնական նպատակներից մեկն էլ Կովկասում գերմանական գերիշխանություն հաստատելն էր և այն իրականացնելու համար գերմանական բանակի կազմում հայկական, վրացական, ադրբեջանական լեգեոնների ստեղծումը, Նժդեհը, Դրոն, խորհրդի մյուս անդամներն այդ գործին լծվեցին սովի ճիրաններից ու անխուսափելի մահից հայ ռազմագերիներին համակենտրոնացման ճամբարներից փրկելու զուտ հայրենասիրական նկատառումներից ելնելով: Նրանք շրջում էին ռազմագերիների ճամբարներում և հավաքագրում հայ զինվորներին ու սպաներին, նույնիսկ կոմունիստներին: Ընդհանուր առմամբ հաջողվեց հավաքագրել շուրջ 8-9 հազար մարդու և ստեղծել Հայկական լեգեոնի 10 գումարտակ: Նույնքան գումարտակներ ստեղծվեցին նաև ադրբեջանցի ռազմագերիներից: Վրացիներից կազմավորվեց 11, իսկ Կովկասի լեռնականներից՝ 5 նման գումարտակ, յուրաքանչյուրում շուրջ 800-ական մարդ: Միջին Ասիայի հանրապետությունների ներկայացուցիչներից ստեղծվեց Թուրքեստանյան լեգեոնը, որը բաղկացած էր 20 հետևակային, 8 սակրային, 2 վարժական և 2 ոստիկանական գումարտակներից: Գերմանական բանակի կազմում ստեղծվեց նաև գեներալ Վլասովի Ռուսական ազատագրական բանակը, որն իր շարքերում ուներ ավելի քան 300000 ռուս զինվոր ու սպա, Ստեփան Բանդերայի Ուկրաինական ազատագրական բանակը, որն իր շսյրքերում ուներ շուրջ 50000 ուկրաինացի զինվոր ու սպա: Հատկանշական է, որ ռայխսկանցլեր Հերման Գյորինգն իր, այսպես կոչված, «Կանաչ թղթապանակում», ֆաշիստական զորապետներին հրահանգել էր.«Կովկասում բնիկների /վրացիների, հայերի, թաթարների և այլն/ և ռուսների միջև հակասությունները պետք է օգտագործել հօգուտ մեր շահերի, հաշվի առնելով հայերի անբարյացակամությունը մեր նկատմամբ...»[79]: Գերմանացիների նկատմամբ հայերի անբարյացակամության մասին նշել է նաև ինքը՝ ֆյուրերը՝ Ադոլֆ Հիտլերը: 1942թ. դեկտեմբերին անդրադառնալով ազգային լեգեոնների կազմավորման հարցին, նա հայտարարել է. «Չգիտեմ, թե ինչպես իրենց կպահեն վրացիները: Նրանք թուրքական ժողովուրդների թվին չեն պատկանում: Ես միայն մուսուլմաններին եմ վստահում: Այդ զուտ կովկասյան գումարտակների կազմակերպումը համարում եմ չափազանց վտանգավոր գործ, բայց միայն մուսուլմանական զորամասեր ստեղծելու մեջ ոչ մի վտանգ չեմ տեսնում... Չնայած Ռոզենբերգի և զինվորականների հավաստիացումներին, հայերին նույնպես չեմ հավատում»[80]: Հիտլերի այս մտավախությունն անհիմն չէր: Նա լավ էր հաս-

կանում. որ հայ ժողովրդի գիտակցության մեջ դեռ թարմ են 1915թ. ողբերգական իրադարձությունները, երբ թուրքական կառավարությունը, կայզերական Գերմանիայի հովանավորությամբ. ծրագրավորված կերպով իրագործեց ծանրագույն հանցագործություն՝ ցեղասպանություն հայերի նկատմամբ: Չնայած Հիտլերի մտավախությանը, այնուամենայնիվ, գերմանական բանակում ստեղծվեցին ազգային լեգեոններ: Անմիջապես նշենք, որ հայ լեգեոնականների բացարձակ մեծամասնությունը թշնամաբար էր տրամադրված գերմանացիների նկատմամբ և մտադիր չէր մարտնչել նրանց համար: Հայ լեգեոնականների մեծ մասը գերմանական զինվորի համազգեստ էր հագել շատ թե քիչ մեղմելու ռազմագերու իր թշվառ վիճակը, իսկ հարկ եղած պահին անցնելու ռազմաճակատի գիծը, միանալու Կարմիր բանակի զորամասերին կամ պարտիզաններին: Ինչպես վկայում են փաստերը, երբ առաջին գումարտակներն ուղարկվեցին Արևելյան ճակատ, նրանց անձնակազմի մեծ մասը փախավ պարտիզանների մոտ: Այսպես ստեղծվեց «Ա. Ի. Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատ»-ը Ուկրաինայում: Հետագայում, երբ գերմանացիները մնացած գումարտակներն ուղարկեցին Ֆրանսիա. Հունաստան, Հոլանդիա, այնտեղ ևս հայ լեգեոնականները միացան այդ երկրների պարտիզաններին՝ ստեղծելով նույնիսկ առանձին գնդեր ու ջոկատներ: Մի խոսքով, Հայկական լեգեոնի ստորաբաժանումները ոչ միայն չծառայեցին գերմանական վերմախտին, այլև դարձան ուկրաինական և բելոռուսական պարտիզանական միավորումների, ֆրանսիական, հունական, հոլանդական դիմադրական շարժման ջոկատների համալրման յուրահատուկ աղբյուր[81]:

Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում իր արժանի ավանդը ներդրեց նաև Խորհրդային Հայաստանի աշխատավորությունը: Չնայած պատերազմական տարիների ծանր պայմաններին ու զրկանքներին, ռազմաճակատից ստացվող հարազատների մահվան բոթը գուժող «սև թղթերին», Հայաստանի աշխատավորության հերոսական ջանքերի շնորհիվ պատերազմի տարիներին հանրապետությունում ոչ միայն պահպանվեցին և հզորացվեցին մինչ այդ եղած գործարանները. այլև շահագործման հանձնվեցին 30 նոր արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց թվում՝ ավիացիոն, ավտոդողերի, կոմպրեսորների, ժամացույցի, շարժիչավերանորոգման և այլն: Արդյունաբերությունը յուրացրեց 300 նոր արտադրատեսակների արտադրությունը, այդ թվում՝ 10 տեսակի զինամթերքի, ականանետների, ականների, նռնակների, ավիառումբերի կորպուսների, ինքնաթիռների, ռետինատեխնիկական իրերի, կաուստիկ սոդայի, ծծմբական թթվի, հեղուկ քլորի, քրոմի անհիդրիդի, քլորոֆորմի և այլն[82]: 1942թ. հոկ-

տեմբերից Երևանի թիվ 447 գործարանը /այժմ՝ Հայէլեկտրամեքենաշինական/ սկսեց վերանորոգել վնասված ինքնաթիռներ: Այնուհետև գործարանն սկսեց արտադրել «Յակ-3» կործանիչ ինքնաթիռի թևեր և շասսի, որոնք ուղարկվում էին Թբիլիսիի ինքնաթիռաշինական գործարան, որտեղ և հավաքվում էր վերջնական արտադրանքը: Պատերազմի վերջին տարում թիվ 447 գործարանն սկսեց «ՈւՏ-2Մ» թեթև ինքնաթիռների սերիական արտադրությունը, որոնք տեղում փորձարկվելուց հետո ուղարկվում էին ռազմաճակատ[53]:

Գյուղատնտեսության աշխատողների հերոսական ջանքերով, պատերազմի տարիներին ոչ միայն չկրճատվեցին գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ու ցանքատարածությունների մակերեսը, այլև զգալի չափով ավելացան դրանք: Դեռ ավելին, գյուղատնտեսական ավանդական մշակաբույսերի հետ մեկտեղ սկսեցին արտադրվել մեծ քանակությամբ նոր տեխնիկական մշակաբույսեր՝ ծխախոտ, ճակնդեղ, ինչպես նաև երկրորդ հացը՝ կարտոֆիլ: Մեծ չափով ավելացան հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները, ինչը հնարավորություն տվեց հանրապետությունն ապահովել սեփական հացով և դրսից հացի ներմուծումը հասցնել նվազագույնի: Զգալի հաջողության հասան նաև անասնապահները, որոնցից շատերն արժանացան կառավարական պարգևների:

Պատերազմում տարած հաղթանակում զգալի էր նաև գիտության, կրթության, արվեստի, գրականության, մշակույթի բոլոր բնագավառների աշխատողների ավանդը: Չնայած պատերազմական դաժան պայմաններին, 1943թ. նոյեմբերի 29-ին հիմնադրվեց ՀՍԽՀ Գիտությունների ակադեմիան, որի առաջին պրեզիդենտ ընտրվեց ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, փոխպրեզիդենտներ՝ ակադեմիկոսներ Վիկտոր Համբարձումյանը և Վարդան Գուլքանյանը: Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հիմնադրումն այդպիսի ծանր ժամանակաշրջանում պատմական խոշոր երևույթ էր հայ իրականության մեջ: Հայ գիտնականները, գրողները, երաժիշտները, դերասանները, նկարիչները, մանկավարժները, բժիշկները, մտավորականության մյուս բոլոր ներկայացուցիչներն իրենց կարողություններն ամբողջովին նվիրեցին հաղթանակի գործին: Պատերազմի տարիներին, Հայաստանի աշխատավորության խնայողությունների հաշվին, Կարմիր բանակի համար կառուցվեցին «Սովետական Հայաստան», «Հայաստանի կոլտնտեսական», «Զանգեզուրի լեռնագործ», «Անդրկովկասի երկաթուղային», «Սովետական ուսուցչություն», «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ», «Հայաստանի Կոմերիտական», «Հայաստանի պիոներիա» տանկային շարասյուները, «Սովետական Հայաստան» գրահագնացքը, «Սովետական Հայաստան», «Հաղ-

քանակ», «Երիտասարդ գվարդիա», «Սովետական արտիստ» ավիաէս-կադրիլիաները և այլն:

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում զգալի ավանդ ներդրեցին նաև ԽՍՀՄ պետական բարձրագույն մարմիններում, ռազմական արդյունաբերության և ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում աշխատող հայ պետական գործիչները, գիտնականները, կոնստրուկտորները և այլն: Բավական է թվարկել նրանցից միայն մի քանիսի անունները ու վարած պաշտոնները, և ավելի պարզ կդառնա մեր ասածը: Անաստաս Միկոյան. 1941թ. հունիսի 30-ից մինչև 1945 թ. սեպտեմբերի 4-ը եղել է ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի անդամ, 7 հոգուց բաղկացած, արտակարգ լիազորություններով օժտված պետական բարձրագույն այդ մարմնի ձեռքում էր կենտրոնացված ԽՍՀՄ ողջ իշխանությունը: Իվան Թևոսյան. 1940-1948թթ. եղել է ԽՍՀՄ սև մետալուրգիայի ժողկոմ, ապա նախարար: Արտեմ Միկոյան. 1940-1978 թթ. եղել է «ՄիԳ» կործանիչ ինքնաթիռների ստեղծագործման կոնստրուկտորական բյուրոյի գլխավոր կոնստրուկտոր: Համո Յոլյան. 1940-1945 թթ. եղել է թիվ 92 հրետանային գործարանի տնօրեն: Ստեփան Ակոպով. 1941-46 թթ. եղել է ԽՍՀՄ միջին մեքենաշինության ժողկոմ, ապա նախարար: Սուրեն Աղաջանով. 1941-1945թթ. եղել է թիվ 21 ավիագործարանի տնօրեն: Հարություն Տեր-Մարգարյան. 1941-1945թթ. եղել է Նովոսիբիրսկի ավիագործարանի գլխավոր ինժեներ: Պարույր Մաթևոսյան. 1941-1971թթ. եղել է Ստալինգրադի «Կրասնի Օկտյաբր» մետաղամշակման գործարանի տնօրեն: Բագրատ Հարությունով. 1939-1946թթ. եղել է ԽՍՀՄ հաղորդակցության ճանապարհների ժողկոմի առաջին տեղակալ և շատ ուրիշներ[84]:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ հայ ժողովուրդը, աշխարհի մյուս առաջադեմ ժողովուրդների թվում, մեծ զոհողությունների գնով, զգալի ավանդ է ներդրել Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում: Հայ ժողովրդի զավակները հերոսաբար մարտնչել են բոլոր ռազմաճակատներում և տարբեր զորատեսակների կազմում, ինչպես Խորհրդային Միության, այնպես էլ նրա դաշնակից երկրների բանակների, պարտիզանական և դիմադրական շարժման ջոկատների շարքերում, իրենց ռազմական ունակություններով ու խիզախությամբ բարձր պահել հայ ժողովրդի պատիվը, նոր փառքով հարստացրել նրա մարտական ավանդույթները: Այդ հաղթանակը կռողների շարքում էին նաև Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորները և սփյուռքահայերը, դրանով իսկ նպաստելով ոչ միայն ֆաշիզմի ջախջախմանը, այլև հայ ժողովրդի մի նոր ահավոր եղեռնի կանխմանը:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 1941թ. դեկտեմբերի 7-ին ֆաշիստական Գերմանիայի դաշնակից ճապոնիան դավադրաբար հարձակվեց Խաղաղ օվկիանոսում ամերիկյան Պյորլ-Հարբոր ռազմածովային նավատորմի գլխավոր բազայի վրա, որի հետևանքով դեկտեմբերի 8-ին ԱՄՆ-ը, Անգլիան, մի շարք պետություններ պատերազմ հայտարարեցին ճապոնիային: Ընդհանուր առմամբ պատերազմի ներգրավվեց 61 պետություն, որտեղ ապրում էր աշխարհի բնակչության 80 %-ը:
2. «The New York Times», Nov. 24, 1945 թ., 7.
3. Տես Ս. Մ. Շտեմենկո, Գլխավոր շտաբը պատերազմի տարիներին, գիրք 1-ին, Ե. , 1970, էջ 69:
4. Геноцид армян в османском империи, Е., 1982, с. 12.
5. Տես «Օգնություն ագիտատորին և պրոպագանդիստին», 1944թ., թիվ 24, էջ 20:
6. “Правда”, 25 августа 1941г.
7. “Правда”, 23 июня 1941г.
8. «Սովետական Հայաստան», «Коммунист», «Ավանգարդ», 23-25 հունիսի 1941:
9. Տես Ա. Ն. Մնացականյան, Միասնական շարքերում, Ե., 1975, էջ 59:
10. Հաշվարկները կատարված են արխիվային նորահայտ և վիճակագրական տվյալների հիման վրա: Այդ մասին ավելի մանրամասն տես Կ.Ա.Հարությունյան, Ու՞մ են պետք պատմական հետազոտությունների հավաստիության նման «ճշտումները», Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 2, 2000, էջ 177-191:
11. Տես՝ Հայ ժողովրդի պատմություն, հ.1, Ե.1971, էջ 587
12. Նույն տեղում, հ.2, Ե.1984, էջ 143
13. Նույն տեղում՝ հ.3, Ե.1976, էջ 273,753
14. Նույն տեղում, հ. 4, Ե., 1972, էջ 147, 168, 223:
15. Նույն տեղում, հ. 6, Ե., 1981, էջ 547:
16. Տես Կ. Ա. Հարությունյան, Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945թթ., պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Ե., 1994, էջ 20:
17. Ռուսաստանի Դաշնության Պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվ /այսուհետև՝ ՌԴ ՊՆԿԱ/, Տեղեկագրքեր հրամկազմի վերաբերյալ, թիվ 7175, 7395, 211:
18. ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 32, ց. 65607, գ. 7, թթ. 76-94:
19. “Красная звезда”, 28 марта 1967г.
20. Ордена и медали СССР, М., 1974, с. 261-266.
21. Հ. Ու. Մելիքսեթյան, Ս. Գ. Սահակյան, Փառքի շքանշանի հայ ասպետները, Ե., 1982, էջ 38-39:
22. «Հայաստանի Հանրապետություն», 12 հոկտեմբերի 1994:
23. ՌԴ ՊՆԿԱ, ֆ.51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի, ց.ֆ, գ.2,թթ.1-3:

24. Ավելի մանրամասն տես Կ. Ա. Հարությունյան, 51-րդ գվարդիական դիվիզիայի մարտական ուղին, Ե., 1980:
25. «Խորհրդային Հայաստան», 5-8 ապրիլի 1942:
26. ՌԴ ՊՆԿԱ, ֆ. Ղրիմի ռազմաճակատի, ց. 1199, գ. 3, թթ. 289-294:
27. Այդ մասին ավելի մանրամասն տես Կ.Ա. Հարությունյան, Հայկական ազգային զորամիավորումների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.), «Պատմաբանասիրական հանդես», 1995, թիվ 1, էջ 60-70:
28. ՌԴ ՊՆԿԱ, Ֆ. 408-րդ հրաձգային դիվիզիայի, ց. 1, գ. 13, թթ. 1-5:
29. Ավելի մանրամասն տե՛ս Ս. Ս. Սարգսյան, Այրվող անտառ, Ե., 1965, Ա. Մ. Հակոբյան, Հերոսական մարտերում, Ե., 1975:
30. ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 56, ց. 12214, գ. 997, թթ. 136-137, ֆ. Անդրկովկասյան ռազմաճակատի, ց. 13185, գ. 12, թթ. 1-2, ֆ. 45-րդ բանակի, ց. 9448, գ. 12, թթ. 209-210:
31. Ավելի մանրամասն տես Կ. Ա. Հարությունյան, Հայ ռազմիկները Հունգարիայի և Ավստրիայի ազատագրման մարտերում /1944-1945թթ./, Ե., 1990:
32. ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 45-րդ բանակի, ց. 9448, թթ. 209-210:
33. Դիվիզիայի մարտական ուղու մասին ավելի մանրամասն տես Ս. Մ. Նալբանդյան, Թամանցիները, Ե., 1960, Դ. Ս. Դալլաքյան, Մարտական 89, Ե., 1966, Ե. Մ. Կարապետյան, Անմահության ճանապարհով, Ե., 1969, Ա. Մ. Հակոբյան, Հերոսական մարտերում, Ե., 1975, Խ. Հ. Բարսեղյան, Կրակների միջով, Ե., 1982 և այլն
34. ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 56, ց. 12214, գ. 877, թ. 5, ֆ. 261-րդ հրաձգային դիվիզիայի, ց. 1, գ. 1, թթ. 7-10:
35. Կ. Ա. Հարությունյան, Հայկական ազգային զորամիավորումների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին /1941-1945թթ./. «Պատմաբանասիրական հանդես» , 1995, թիվ 1, էջ 70-71:
36. ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 56, ց. 12214, գ. 405, թթ. 278:
37. К. В. Цкитишвили, В. И. Чёрный, Во имя защиты Социалистического Отечества (Народный подвиг в битве за Кавказ, М. 1981, с. 319).
38. Книга о героях, Е., 1985, с. 17-18.
39. ՌԴ ՊՆԿԱ, ֆ. Հյուսիսարևմտյան ռազմաճակատի, ց. 1386, գ. 475, թ. 207:
40 ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 33, ց. 682524, գ. 129, թ. 226, գ. 434, թ. 82, գ. 521, թ. 34, գ. 484, թ. 33, գ. 519, թ. 251, գ. 517, թ. 158:
41. Նույն տեղում, գ. 475, թ. 207:
42. Նույն տեղում, փոխգնդապետ Ն. Գ. Պետրոսյանի անձնական գործ թիվ 229094, թթ. 1-2:
43. Г. Холопов, Первый Гастелло, газ. "Во славу Родины", 27 февраля 1942г.
44. Навечно в строю, вып. 1, М., 1971, с. 56.
45. Տվյալները վերցված են ՌԴ ՊՆԿԱ գիտատեղեկատու գրադարանի

ծառայողական նպատակների համար նախատեսված հատուկ տեղեկատու գրքից:
46. Ի.Ք. Բաղրամյան, «Այսպես է սկսվել պատերազմը», Ե., 1975, էջ 677:
47. "Правда", 28 декабря 1941г.
48. ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 682524, գ. 274, թ. 120:
49. Նույն տեղում, ֆ. Արևմտյան ռազմաճակատի, ց. 2522, գ. 140, թթ. 29, 139, 178, գ. 398, թթ. 108, 116, 500:
50 Նույն տեղում, ֆ. 33, ց. 793756, գ. 7, թթ. 159-160:
51 Նույն տեղում, ֆ. Ստալինգրադյան ռազմաճակատի, ց. 228, գ. 41, թ. 26:
52. Նույն տեղում, ֆ. 33, ց. 682524, գ. 271, թ. 17:
53. Նույն տեղում, գ. 164, թ. 97:
54. Ավելի մանրամասն տես Գ. Ա. Գրիգորյան, Դրվագներ Ստալինգրադյան հերոսամարտերից, Ե., 1979, Կ. Ա. Հարությունյան, 51-րդ գվարդիական դիվիզիայի մարտական ուղին, Ե., 1980, С. С. Арутюнян, Под знаменем Гвардии, Е., 1982; Ս. Գ. Միրզոյան, Ստալինգրադյան հրացոլք, Ե., 1974, Ստալինգրադցիները հաղթանակը կռողներ, Ե., 1985, Կյանքի հավերժ կրակը, Վոլգոգրադ, 1996 /վերջին երեք գրքերը՝ ռուսերեն/:
55. ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 33, ց. 682524, գ. 12, թ. 152:
56. Նույն տեղում, ց. 682524, գ. 617, թ. 466:
57. Հայ ժողովրդի խոսքը ռազմաճակատում գտնվող իր զավակներին, Ե., 1943:
58. Հայ մարտիկների պատասխանը հայ ժողովրդին, Ե., 1944:
59. «Սովետական Հայաստան», 24 հունիսի 1945 թ.:
60. Книга о Героях, с. 30, 49.
61. Правда, 28 августа 1943г.
62. ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 5-րդ գվարդիական տանկային բանակի, ց. 4935, գ. 20, թ. 19, ֆ. 33, ց. 686043, գ. 5, թ. 311, ց. 686943, գ. 5, թ. 179:
63. Նույն տեղում, ֆ. 33, ց. 686044, գ. 702, թ. 180, ց. 682256, գ. 919, թ. 91, գ. 105, թ. 334:
64. Книга о Героях, с. 34-35.
65. Правда, 26 января, 1976г.
66. ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 33, ց. 793756, գ. 12, թ. 77:
67 Նույն տեղում, ց. 686043, գ. 38, թ. 226:
68. Նույն տեղում, գ. 13, թ. 66:
69. Նույն տեղում, գ. 42, թթ. 97-98, 158-177:
70. Ավելի մանրամասն տես Ե. Մ. Խալեյան, Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին, Ե., 1975:
71. Ավելի մանրամասն տես Ի. Ս. Իսակով, Սովետական Հայաստանի զավակները Լենինգրադի պաշտպաններ, Ե., 1946, Հայ ծովայինները Հայրենական մեծ պատերազմում, Ե., 1946, Մ. Գ. Սահակյան: Սովետական ռազմիկների մարտական եղբայրությունը Լենինգրադի համար մղված մարտերում, Ե, 1985:

72. ՌԴ ՊՆԿԱ. ֆ. 793756. գ. 3. թթ. 238-240:
73. Նույն տեղում. ց. 682524. գ. 59. թթ. 21-22. ց. 682526. գ. 1719. թ. 59. . 690155. գ. 7049. թ. 183. ց. 682524. գ. 40. թ. 99:
74 Ավելի մանրամասն տես Կ. Ա. Հարությունյան. 51-րդ գվարդիական դիվիզիայի մարտական ուղին. Ե., 1980. Մ. Գ. Սահակյան. Սովետական Մերձբալթիկայի համար մղված մարտերում. Ե., 1981:
75. Հ. Ու. Մելիքսեթյան. Մ. Գ. Սահակյան. Փառքի շքանշանի հայ ասպետները. Ե., 1982:
76. ՌԴ ՊՆԿԱ. ֆ. 33. ց. 686196. գ. 4250. թ. 170:
77. Այդ մասին ավելի մանրամասն տես Կ. Ա. Հարությունյան. Հայ ռազմիկները Չեխոսլովակիայի ազատագրման համար մղված մարտերում /1944-1945թթ./. Ե., 1983. Հայ ռազմիկները Հունգարիայի և Ավստրիայի ազատագրման մարտերում /1944-1945թթ./. Ե., 1990:
78. Հայ պարտիզանների մասին ավելի մանրամասն տես Ե. Մ. Խալեյան. Ղրիմի և Կովկասի պարտիզանական շարժման պատմությունից. Ե., 1981. Թշնամու թիկունքում. Ե., 1990. Վ. Ն. Ղազախեցյան. Միկոյանի անվան պարտիզանական ջոկատը. Ե., 1955 և այլն:
79. Ա. Լեոնտև. Գյորինգի «Կանաչ թղթապանակը». Ե., 1944. էջ 45:
80. Ա. Վերտ. Ռուսաստանը 1941-1945 թվականների պատերազմում. Ե., 1969. էջ 536:
81. Ավելի մանրամասն տես Կ. Ա. Հարությունյան. Գերմանական բանակի Հայկական լեգեոնը. «Գարուն» ամսագիր. Ե.. 1994. թիվ 7. էջ 68-70:
82. Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ /այսուհետև՝ ՀՀ ՆՊԿԱ/. ֆ. 113. ց. 33. գ. 5. թթ. 3-34:
83. ՀՀ ՆՊՊԿԱ. ֆ. 313. ց. 1. գ. 8. թ. 104:
84. Ավելի մանրամասն տես Հ.Հ. Մանուկյան. Խորհրդային Հայաստանի աշխատավորության ավանդը Հայրենական մեծ պատերազմի հաղթանակում (1941-1945 թթ.). Ե., 2000:

ՑՈՒՑԱԿ 1. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՀԵՐՈՍՆԵՐԻ

| N | Ազգանուն, Անուն, Հայրանուն | Ծննդյան թիվը և ծննդավայրը | Հերոսի կոչում շնորհելու հրամանագիրը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Սիմոնյան Կարապետ Սիմոնի | 6.6. 1918թ. ք. Թբիլիսի | 15.01.1940թ. |
| 2 | Պարսեղով Միքայել Արտեմի | 15.6.1899թ. գ. Կոլխոզաշեն, Մարտակերտի շրջան, Արցախ | 21. 3. 1940թ. |
| 3 | Հայրապետյան Գրիգոր Միքայելի | 22. 8. 1914թ. գ. Մինգրելսկ, Մարտակերտի շրջան, Արցախ | 7. 4. 1940թ. |
| 4 | Մանասյան Իսահակ Մարկոսի | 10.10.1917թ. գ. Խերխան, Մարտունու շրջան, Արցախ | 7. 4. 1940թ. |

## ԼՎԱԾ

ա/ Խորհրդաֆիննական պատերազմ /30.11.1939թ.- 13.03.1940թ./

| Հերոսություն կատարելիս ունեցած զինվորական կոչումը, պաշտոնը, զորամասը | Երբ, ո՛րտեղ և ի՛նչ սխրանքի համար է շնորհվել հերոսի կոչումը | Ծանոթություն |
|---|---|---|
| 5 | 6 | 7 |
| Շարքային, 7-րդ բանակի 20-րդ տանկային բրիգադի 91-րդ տանկային գումարտակի 1-ին տանկային վաշտի տանկի ռադիստ | 1939թ. դեկտեմբերի վերջերին Կարելյան պարանոցում Մաններհայմի գծի պաշտպանական ամրությունները ճեղքելիս կատարած հերոսության համար: | 1941-1944թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, զորացրվել մայորի կոչումով, ապրել Թբիլիսիում, որտեղ և մահացել է 12.12.1983թ.: |
| Դիվիզիայի հրամանատար, 7-րդ բանակի հրետանու պետ | 1939թ. դեկտեմբեր-1940 թ. մարտին Կարելյան պարանոցում Մաններհայմի գծի պաշտպանական ամրությունները ճեղքելիս կատարած հերոսության համար | 1941-1945թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, Խորհրդա-ճապոնական պատերազմին, եղել ռազմաճակատի հրետանու պետ, բանակի հրամանատար. 1961թ. գեներալ-գնդապետ: Մահացել է 26.04.1964թ. Լենինգրադում: |
| Կրտսեր լեյտենանտ, 13-րդ բանակի 50-րդ հրաձգային դիվիզիայի 756-րդ հրաձգային գնդի դասակի հրամանատար: | 1940թ. փետրվարի 11-ին Վիբորգի շրջանի Վուոկսի լճի հարավում տեղի ունեցած մարտերում ցուցաբերած հերոսության համար: | 1941-1945 թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, մարտնչել Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիայի շարքերում, Կուբանից հասել Հունգարիա: 1959թ. պահեստի փոխգնդապետ: Մահացել է Երևանում 1998թ. մարտի 14-ին: |
| Կրտսեր հրամանատար, 13-րդ բանակի 4-րդ հրաձգային դիվիզիայի 39-րդ հրաձգային գնդի գնդացրային վաշտի դասակի հրամանատարի օգնական: | 1940թ. մարտի 5-7-ը Վիբորգի շրջանի Բարիշևո գյուղի մոտ Վուոկսա գետը հաղթահարելիս կատարած հերոսության համար: | 1941-1945թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, 1947թ. զորացրվել է մայորի կոչումով, ապրել Բաքվում, որտեղ և մահացել է 5.9.1974թ.: |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | | բ/ Հայրենական մեծ պատերազմ |
| 1 | Չափչախով Լազար Սերգեյի | 6. 3. 1941թ. գ. Մեծ Սալի, Դոնի Ռոստովի մարզ | 21.7.1942թ. |
| 2 | Ստեփանյան Նելսոն Գևորգի | 28. 3. 1913թ. ք. Շուշի, Արցախ, 1915թ. ընտանի-քով բնակվել է Երևանում | Խորհրդային Միության կրկնակի հերոս<br>1. 23.10.1942<br>2. 6.3.1945 /հետմահու/ |
| 3 | Մելիքյան Խաչատուր Բեգլարի | 1911թ. գ. Զագլիկ, Քարիատի շրջան, Հյուսիսային Արցախ | 5.11.1942թ. /հետմահու/ |

| 5 | 6 | 7 |
|---|---|---|
| /22.06.1941թ.- 09.05.1945թ./ | | |
| Գումարտակային կոմիսար, Յյուսիսարևմտյան ռազմաճակատի ռազմաօդային ուժերի 38-րդ կործանիչ ավիագնդի ավիաէսկադրիլիայի զինվորական կոմիսար: 1942 թ. ապրիլի 5-ից 416-րդ կործանիչ ավիագնդի հրամանատար: | 1941թ. հունիսի 22-ից մինչև 1942թ. ապրիլի 5-ը Մերձբալթիկայում և Լենինգրադի մատույցներում կատարել է 268 մարտական թռիչք, անձամբ խփել հակառակորդի 8, իսկ խմբով 19 ինքնաթիռ: | Զոհվել է 1942թ. ապրիլի 13-ին Նովգորոդի, մարզի Կրեստցի օդանավակայանում, մարտական առաջադրանքը կատարելիս: Թաղված է Կրեստցի բնակավայրում: |
| 1. Կրտսեր լեյտենանտ, Բալթյան նավատորմի ռազմաօդային ուժերի 8-րդ ավիաբրիգադի 57-րդ ավիագնդի ավիաօղակի հրամանատար:<br>2. Գվարդիայի փոխգնդապետ, Բալթյան նավատորմի ռազմաօդային ուժերի 11-րդ գրոհային ավիադիվիզիայի 47-րդ գրոհային ավիագնդի հրամանատար: | 1. 1941թ. ամռանը և աշնանը Յարավային և Լենինգրադյան ռազմաճակատներում կատարած 58 մարտական թռիչքների համար:<br>2. 1942թ. հոկտեմբեր-1944թ. օգոստոս Լենինգրադի և Մերձբալթյան հանրապետությունների ծովամերձ շրջաններում կատարած 239 մարտական թռիչքների ժամանակ հակառակորդի ծովային և ցամաքային ուժերին մեծ կորուստներ հասցնելու և մարտերում ցուցաբերած հերոսության համար: | Զոհվել է 14.12.1944 թ. Լիբավայի ծովախորշի շրջանում /Լիեպայա քաղաքի մոտ, Լատվիա/ տեղի ունեցած օդային մարտի ժամանակ: |
| Լեյտենանտ, Յարավարևմտյան ռազմաճակատի 21-րդ բանակի 227-րդ հրաձգային դիվիզիայի 777-րդ | 1941թ. դեկտեմբերի 7-ից մինչև 1942 թ. հունվարի 8-ը Բելգորոդի և Կուրսկի մարզերի Պրոխորովկա, Պերեսիպ, Օռլովկա, Զորինսկիե | Զոհվել է 8. 1. 1942թ. Օբոյան քաղաքի մատույցներում /Կուրսկի մարզ, Ռուսաստանի Դաշնություն/: Թաղված է Օբոյան քաղաքում: |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| 4 | Մկրտումյան Սամսոն Մովսեսի | 26. 8. 1918թ. գ. Բռնակոթ, Սիսիանի շրջան | 13.12.1942թ. |
| 5 | Օգանով Սերգեյ Անդրեյի | 23.2.1921թ. ք. Թբիլիսի | 22.2.1943թ. /հետմահու/ |
| 6 | Մադոյան Ղուկաս Կարապետի | 5.1.1906թ. գ. Քերս, Կարսի մարզ | 31.3.1943թ. |

| 5 | 6 | 7 |
|---|---|---|
| հրաձգային գնդի գումարտակի հրամանատար: | Դվորի և Օբոյան բնակավայրերի շրջանում տեղի ունեցած մարտերում ցուցաբերած հերոսության համար: | |
| կապիտան, Անդրկովկասյան ռազմաճակատի հյուսիսային զորախմբի 4-րդ օդային բանակի 230-րդ գրոհային ավիադիվիզիայի 805-րդ գրոհային ավիագնդի ավիաէսկադրիլիայի հրամանատար: | 1942 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Կովկասի ճակատամարտի ծանր օրերին Օրջոնիկիձեի շրջանի Գիզել, Կրիվոնոսով, Կադգորոն և այլ բնակավայրերի համար մղված մարտերում 27 մարտական թռիչք կատարելիս ցուցաբերած խիզախության և հակառակորդի կենդանի ուժին ու տեխնիկային պատճառած վնասների համար: | Զոհվել է 1.11.1943թ. Գոմել քաղաքի շրջանում տեղի ունեցած օդային մարտերում /Բելոռուսիա/: |
| Լեյտենանտ, Հարավային ռազմաճակատի 56-րդ բանակի 317-րդ հրաձգային դիվիզիայի 606-րդ հրաձգային գնդի 76 միլիմետրանոց հրետանային մարտկոցի հրամանատար: | 1941թ. նոյեմբերի 17-18-ին Դոնի Ռոստովի Մեծ Սալի գյուղի մոտ Բերբեր Օբա Կուրգանում մարտկոցը անհավասար մարտի է բռնվել հակառակորդի 50 տանկերի դեմ, կասեցրել նրանց գրոհները և ոչնչացրել շուրջ 30 տանկ: | Զոհվել է մարտում 18.11.1941թ.: Թաղ-ված է Մեծ Սալի գյուղում /Դոնի Ռոստով/: |
| Ավագ լեյտենանտ, Հարավային ռազմաճակատի 28-րդ բանակի 159-րդ առանձին հրաձգային բրիգադի 3-րդ առանձին հրաձգային գումարտակի հրամանատար: | 1943թ. փետրվարի 7-ի գիշերը լույս 8-ի առավոտյան գումարտակը թշնամուց ազատագրել է Դոնի Ռոստովի երկաթուղային կայարանը և դաժան մարտերում այն պահել մինչև փետրվարի 14-ը քաղաքի լրիվ ազատագրումը: | 1944թ. փոխգնդապետ, գնդի հրամանատար, Դեմբիցա /Լեհաստան/ քաղաքի շրջանում տեղի ունեցած մարտում ծանր վիրավորվել է, գրկվել ձախ ոտքից: Նույն թվին զորացրվել է և ապրել Երևանում: Եղել է սոցապ նախարար և այլն: Մահացել է Երևանում 11. 6. 1975թ.: |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| 7 | Իոնոսյան /Յովհաննիսյան/ Վլադիմիր Աբրահամի | 17.7.1905թ. ք. Բաքու | 27.8.1943թ. |
| 8 | Ղազարյան Անդրանիկ Աբրահամի | 14.5.1904թ. ք. Շուշի, Արցախ | 16.10.1943թ. |
| 9 | Բալայան Գարեգին Շեգիի | 28.2.1912թ. գ. Գյուլիստան, Շահումյանի շրջան, Յյուսիսային Արցախ | 23.10.1943թ. /հետմահու/ |
| 10 | Միքայելյան Գեղեոն Յայրապետի | 1.8.1907թ. ք. Նոր-Բայազետ /այժմ Գավառ/ | 26.10.1943թ. |

| 5 | 6 | 7 |
|---|---|---|
| Գվարդիայի լեյտենանտ, Բրյանսկի ռազմաճակատի 11-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 27-րդ գվարդիական հրաձգային գնդի 9-րդ վաշտի դասակի հրամանատար: | 1943թ. հուլիսի 12-13-ին Օրյոլի մարզի Ուլյանովոյի շրջանի Տրոստյանսկի և Բելիյ Վերխ գյուղերի մոտ տեղի ունեցած դաժան մարտերում /Կուրսկի ճակատամարտ/ ցուցաբերած խիզախության համար: | Զոհվել է Կարաչև քաղաքի մատույցներում տեղի ունեցած մարտերում 3.8.1943թ.: Թաղված է Կարաչև քաղաքում /Բրյանսկի մարզ, Ռուսաստանի Դաշնություն/: |
| Գեներալ-մայոր, Կենտրոնական ռազմաճակատի 13-րդ բանակի 74-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար: | 1943թ. սեպտեմբերի 23-ին Գոմելի մարզի Բրագինսկի շրջանի Կոմարին գյուղի մոտ /Բելոռուսիա/ դիվիզիան բանակում առաջիններից թվում գետանցել է Դնեպրը և հենակետ գրավել նրա աջ ափին: | 1945թ. օգոստոսին, որպես 1-ին Հեռավոր-արևելյան ռազմաճակատի 215-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, մասնակցել է Արևելյան Չինաստանը /Մանջուրիա/ ճապոնական զավթիչներից ազատագրմանը: 1958թ. զորացրվել է բանակից և բնակություն հաստատել Ղրիմում Սիմֆերոպոլում: Մահացել է 18.1.1992թ. Սիմֆերոպոլում: |
| Կապիտան, Վորոնեժի ռազմաճակատի 3-րդ գվարդիական տանկային բանակի 69-րդ մեքենայացված բրիգադի 1-ին մոտոհրաձգային գումարտակի հրամանատար: | 1943թ. սեպտեմբերի 22-ին Չերկասկի մարզի Կանև քաղաքի /Ուկրաինա/ մոտ առաջինների թվում գումարտակը գետանցել է Դնեպրը և Զարուբինցի գյուղի շրջանում հենակետ գրավել գետի արևմտյան ափին: | Զոհվել է 1943թ. սեպտեմբերի 25-ին Կանևի շրջանի Զարուբինցի գյուղի մոտ գրաված հենակետի պաշտպանության մարտերում: Թաղված է նույն գյուղում: ԽՍՀՄ պաշտպանության նախարարի 1972թ. նոյեմբերի 5-ի թիվ 236 հրամանով նրա անունը հավերժ գրանցված է թիվ 58731զորամասի 1-ին մոտոհրաձգային վաշտի անձնակազմի ցուցակում: |
| Գվարդիայի փոխգնդապետ, Տափաստանային ռազմաճակա- | 1943թ. սեպտեմբերի 24-ին Պոլտավայի մարզի Կոբելյակի շրջանի Ստարի Օր- | 1953թ. պաշտոնաթող գնդապետ, ապրում էր Երևանում, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազ- |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| 11 | Շահումյան Իվան Կոնստանտինի | 15.10.1910թ. գ. Պառավաքումբ, Մարտունու շրջան, Արցախ | 30.10.1943թ. |
| 12 | Կարապետյան Ասքանազ Գևորգի | 20.12.1899թ. գ. Արագափ, Արմավիրի շրջան | 1.11.1943թ. |
| 13 | Մուրադյան Անդրանիկ Հակոբի | 1911թ. ք. Գելենջիկ, Կրասնոդարի երկրամաս /1937թ. բնակվում էր Երևանում/ | 1.11.1943թ. |

| 5 | 6 | 7 |
| --- | --- | --- |
| տի 7-րդ գվարդիական բանակի 73-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 209-րդ գվարդիական հրաձգային գնդի հրամանատար: | լիկ գյուղի /Ուկրաինա/ մոտ գունդը առաջինների թվում հաջողու-թյամբ գետանցել է լայնահուն Դնեպ-րը և հենակետ գրավել Բորոդանսկ գյուղի շրջանում: | գագրության ինստիտուտի գիտաշխատող էր: Մահացել է Երևանում 1.12.1985թ.: |
| Սերժանտ, Կենտրոնական ռազմաճակատի 65-րդ բանակի 69-րդ հրաձգային դիվիզիայի 120-րդ հրաձգային գնդի առանձին քիմիական պաշտպանության դասակի ջոկի հրամանատար: | 1943թ. հոկտեմբերի 15-ին Գոմելի մարզի Լոևի շրջանում /Բելոռուսիա/ առաջինների թվում գետանցել է Դնեպրը և հենակետ գրավել նրա արևմտյան ափին: | Հաղթանակից հետո 1945թ., զորացրվել է բանակից և բնակություն հաստատել Մոսկվայում: 1948թ. ավարտել է ԽՍՀՄ գյուղատնտեսական ակադեմիայի ասպիրանտուրան, ստացել գյուղատընտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, եղել է Ռուսաստանի գյուղատնտեսական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն: |
| Գնդապետ, 4-րդ Ուկրաինական ռազմաճակատի 51-րդ բանակի 315-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի շարային գծով տեղակալ: | 1943թ. հուլիսի 17-օգոստոսի 1-ը Դոնեցկի մարզի Մարինովկա և Ստեպանովկա բնակավայրերի շրջանում Միուս գետը հաղթահարելու, սեպտեմբերի 1-22-ը Դոնբասն ազատագրելու և հոկտեմբերի 12-22-ը Մելիտոպոլ /Ուկրաինա/ քաղաքի համար մղված մարտերում ցուցաբերած հերոսության համար: | 1944թ. նրան շնորհվել է գեներալ-մայորի կոչում: 1951թ. հունվար- 1952թ. սեպտեմբեր. եղել է Հայկական 89-րդ Թամանյան, եռակի շքանշանակիր հրաձգային դիվիզիայի հրամանատար: 1954թ. զորացրվել է բանակից և ապրել Երևանում: Մահացել է 31.10. 1978թ.: |
| Լեյտենանտ, տափաստանային ռազմաճակատի 46-րդ բանակի 236-րդ հրաձգային դիվիզիայի 177-րդ | 1943թ. սեպտեմբերի 24-29-ին Դնեպրոպետրովսկի մարզի Վերխնե-Դնեպրովսկի շրջանի Կուլիշի, Սոչինովկա գյուղերի ազա- | Զոհվել է 1943թ. նոյեմբերի 5-ին Դնեպրոպետրովսկի մարզի Բոժեդարովսկի շրջանի Միլորադովկա բնակավայրի /Ուկրաինա/ ազատագրման |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| 14 | Սարկիսով Ֆեոդոր Իսայու | 1915թ. գ. Խաս-Չիֆթլիկ, Կարսի մարզ /մանկությունն ու պատանեկությունն անց է կացրել Կրասնոդարի երկրամասի Նովոկուրգանսկի շրջանի Կրասնոկոպսկ ստանիցայում | 1.11.1943 |
| 15 | Կալուստով /Գալստյան/ Գրիգոր Շահումի | 28.12.1908թ. ք. Բաքու | 4.11.1943թ. /հետմահու/ |
| 16 | Սարգսյան Վասիլ Նադոյի | 15.3.1922թ. ք. Օդեսա | 17.11.1943թ. |
| 17 | Գրիգորյան Սերգեյ Վարդանի | 14.4.1923թ. ք. Վլադիկավկազ. | 20.12.1943թ. /հետմահու/ |

| 5 | 6 | 7 |
| --- | --- | --- |
| հրաձգային գնդի 1-ին հրաձգային վաշտի հրամանատար: | տագրման և Դնեպրի գետանցման ժամանակ ցուցաբերած անձնազոհ սխրանքի համար /Ուկրաինա/: | մարտում: |
| Գվարդիայի լեյտենանտ. 4-րդ Ուկրաինական ռազմաճակատի 51-րդ բանակի 126-րդ հրաձգային դիվիզիայի 366-րդ հրաձգային գնդի 3-րդ գումարտակի կուսկազմակերպիչ: | 1943թ. հոկտեմբերի 19-23-ին աչքի է ընկել Մելիտոպոլ քաղաքի ազատագրման մարտերում /Զապորոժիեի մարզ, Ուկրաինա/: | Զոհվել է 1944թ. հոկտեմբերի 8-ին Լիտվայի Ուպին բնակավայրի ազատագրման մարտում: Թաղված է Լիտվայի Տաուրագեի շրջանի Սկաուդվիլե քաղաքում: |
| Գվարդիայի գնդապետ, Կենտրոնական ռազմաճակատի 2-րդ տանկային բանակի 11-րդ գվարդիական առանձին տանկային բրիգադի հրամանատարի քաղգծով տեղակալ: | 1942թ. մայիս-1943թ. օգոստոս բրիգադը ոչնչացրել է հակառակորդի 548 տանկ, 449 հրանոթ, 11 ինքնաթիռ, ավելի քան 12000 զինվոր ու սպա, որոնց զգալի մասը 1943թ. հուլիսի 5- օգոստոսի 8-ին Կուրսկի ճակատամարտում: | Զոհվել է 1943թ. օգոստոսի 7-ին Կուրսկի ճակամարտում: Թաղված է Կուրսկ քաղաքում /Ռուսաստան/: |
| Գվարդիայի լեյտենանտ, Վորոնեժի ռազմաճակատի 3-րդ գվարդիական տանկային բանակի 54-րդ գվարդիական բրիգադի 1-ին մոտոհրաձգային գումարտակի դասակի հրամանատար: | 1943թ. սեպտեմբերի 24-ին Կիևի մարզի Միրոնովսկի շրջանի Տրախտեմիրով գյուղի /Ուկրաինա/ շրջանում Դնեպրը գետանցելու և նրա աջ ափին հենակետ գրավելիս ցուցաբերած խիզախության համար: | 1947թ. պահեստի կապիտան, բնակվում էր Օդեսայում, որտեղ և մահացել է 1968թ. սեպտեմբերի 19-ին: |
